

ՄԱՐԶԻԿ

հսլս

مارزقك

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

հԸ ՏԱՐԻ, 2009, ԹԻԻ 6-9 (324-327) VOL. XXVIII N°6-9 السنة الثامنة والعشرون - العدد 6-9

marzig
SPORTS MAGAZINE

ՀԱՄԱՆ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ
ՑՐԴ ՄԱՐԶԱՆԱԴԵՐ - ԵՐԵՎԱՆ



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՇՆՈՒԹԵԼՆ ԵՒ ԳՆԱՇՆԱՏՆՔԻ ԳԻՐԸ ՇԱՄԱ-Շ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՑՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ

ԵՐԵՒԱՆ, ՇԱՅՆԱՏՆԱԿ, 1 Օ ԳՈՍՏՈՍ 2009

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն Հայրապետական օրհնութեամբ, քրիստոնէական ջերմ սիրով ու ազգային վառ ապրումներով կ'ողջունենք Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան մեծ ընտանիքը, որ ահա դարձեա՛լ հաւաքած է իր աշխարհացրիւ անդամները հայրենի հողին վրայ՝ հաւատարիմ իր որդեգրած սկզբունքներուն, դասանած արժէքներուն ու հետապնդած երազներուն:



Արդարեւ, Շ.Մ.Ը.Մ.ը մեր հոգեւոր, բարոյական ու ազգային իտէլաներու ու արժէքներու նկատմամբ իր ցուցաբերած օրինակելի նախանձախնդրութեամբ միշտ մնաց տիրական ներկայութիւն հայ ժողովուրդի կեանքէն ներս՝ դառնալով բոլորին համար սիրելի ու յարգելի միութիւն մը: Շ.Մ.Ը.Մ.ը եղաւ ամէ՛ն տեղ մեր ժողովուրդի զաւակներուն հետ, բերելով իր գործօն մասնակցութիւնը՝ Սփիւռքի մէջ հայապահպանման վսեմ առաքելութեան, իսկ Հայաստանի մէջ՝ հայրենակերտումի նուիրական գործին: Շ.Մ.-Ը.Մ.ի ներկայութիւնը մեր հաւաքական կեանքէն ներս միշտ եղաւ ու կը մնայ ծառայակա՛ն ներկայութիւն՝ ազգին ու հայրենիքին ընդհանրական ու գերազոյն արժէքներուն ու ձգտումներուն կենսագործման յանձնառու ու կազմակերպ ներկայութիւն:

Շո՛ւս կը կայանայ Շ.Մ.Ը.Մ.ի իրայատուկ նկարագիրը. հոս կը կայանայ անոր վեհութիւնը ու հզօրութիւնը:

Արդ, այս օրերուն երբ դարձեալ Շ.Մ.Ը.Մ.ի հայրենիքի թէ Սփիւռքի անդամները հաւաքուած են Համա-Շ.Մ.Ը.Մ.ական ծրոյ մարզախաղերու ծիրէն ներս, վերահաստատելու իրենց պատկանելիութիւնը այս մեծ ընտանիքին, Մեր կոչն է բոլո՛ր Շ.Մ.Ը.Մ.ականներուն, ներկայ թէ բացակայ, միութեան հիմնադիրներուն օրինակով եւ անցնող տասնամեակներու բոլոր տիպար Շ.Մ.Ը.Մ.ականներու ծառայութեան ձամբով շարունակելու Շ.Մ.Ը.Մ.ի ազգակերտ ու հայրենաշէն առաքելութիւնը:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ միշտ կանգուն եւ ծաղկուն պահէ Շ.Մ.Ը.Մ.ը իր կեանքով ու առաքելութեամբ:

Հայրական ջերմ սիրով

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԻ ՄԱՐԶԱՄԱՂԵՐՈՒՆ ԿՈՒՒՐՈՒՄԾ ԲԱՅԱՌԻԿ ԱՅՍ ԹԻՒԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2 Զեղի ընծա՛յ...

ԱՆԴՐԱԴԱՐՁ

4 Մեծագոյնը, լաւագոյնը, գեղեցկագոյնը
Վ. Աւագեան

ՆԱԽՕՐԵԱԿԸ / ԲԱՅՈՒՄԸ

9 Մարզախաղերու մամլոյ ասուլիսը
10 Պատմական բացումը

ԽԱՂԵՐՈՒ ԱՌԻԹՈՎ

22 Հայաստանը Սփիւռքով զօրաւոր է, իսկ Սփիւռքը՝ Հայաստանով
23 Յարգանքի տուրք եղեռնի նահատակներու յիշատակին

ՎԿԱՅՈՒԹԻՒՆ

25 Վարակիչ հպարտութիւն Գրիգորիս Պողարեան
26 «Ազատ Օր»ի հարցազրոյցը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիելեանի հետ
28 Հ.Մ.Ը.Մ.ի դրօշարշար պիտի շարունակուի
Գառնիկ Մկրտիչեան
29 Զոյգ իրագործումներ եւ անկէ քաղուելիք դասեր
Միհրան Շիմշիրեան

ԱՐՁԱԳԱՆԳ

30 Համահայկական խաղեր. միջոցառում, որը կորցնում է իր իմաստը
Գագիկ Բեգլարեան
31 Հ.Մ.Ը.Մ.ի հերթական մարզախաղերը՝ Հայաստանում
Սեւակ Յակոբեան

32 Ծամբայ բացէ՛ք

«Հայրենիք»

ԴԱՍՏԻԱՐԱԿԿԱԿԱՆ

33 Հ.Մ.Ը.Մ.ը եւ Հ.Մ.Ը.Մ.ականը Գառնիկ Մկրտիչեան
39 Հ.Մ.Ը.Մ. եւ Հայ Դատ
Կիրո Մանոյեան

ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍԻ

41 Ուղերձ
Հայ Մշակութային «Արարատ» կազմակերպութիւն

ՄԱՐԶԱՄԱՂԵՐԸ

42 Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ֆութպոլը վերագտաւ իր ախոյեանը՝ Արեւմտեան Մ. Նահանգները
74 Ծատրակը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն նորութիւնը
76 Հ.Մ.Ը.Մ.ական «Ոսկէ տղան» 9 ոսկի եւ 1 արծաթ մետալներով կը գրէ հայկական լողի նոր պատմութիւն
81 Փինկ-փոնկի զոյգ աստղերը՝ հայր ու զաւակ Ռոպէրթ եւ Էրիք Ծահնազարի
82 Պասքեթպոլի թագաւորը՝ Արեւմտեան Մ. Նահանգներ, թագուիին՝ Թեհրանի Հ.Մ.Ա.Կ.
152 Կրտսերներ, վեթերաններ բոլորը պասքեթպոլի սիրահարներ

ՓԱԿՈՒՄԸ

154 Փանձան հանդիսութիւնը մարզախաղերը կը կնքէ փառաւոր յաջողութեամբ
156 Յաղթանակի ճաշկերոյթ-պարահանդէսը





Հ Ա Մ Կ Դ Թ Ը Դ Ե Դ Ե Դ Ե Դ

ՁԵԶԻ ԸՆԾՎՅՅ...

Սովորութիւն է, յաջողութեան մը գագաթնակէտին, բերկրանքի եւ ցընծութեան պահուն, յաջողութիւնը նուիրել սիրելիի մը, որ օրին մէկը երազած է նման բան:

Կը պատահի նաեւ, որ յաջողութիւններու պատուանդանին վրայ, մարդիկ յիշեն իրենց գործակիցները եւ անոնց նուիրեն այս կամ այն մրցանակը, առ ի երախտագիտութիւն անոնց ցուցաբերած աջակցութեան:

Սովորութիւնները յարգող միութիւն է Հ.Ս.Ը.Ս.:

Երախտագէտ միութիւն է Հ.Ս.Ը.Ս.:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական Ցրդ մարզախաղերէն յաղթական վերադարձին, ան չի կրնար իր ունեցած մեծ յաջողութիւնը չնուիրել սիրելիի մը կամ սիրելիներու:

Բայց որո՞ւ:

Համա-Հ.Ս.Ը.Ս.ական Ցրդ մարզախաղերը լուսաւոր էջ մը բացին միութեան մարզական պատմութեան մէջ, եւ լոյսէ փառապսակին առաջին ընծան, բնականաբար, կ'երթայ միութեան գաղափարախօս Շաւարշ Քրիսեանին, որ շուրջ դար մը առաջ Պոլսոյ մէջ նախածեռնեց հայկական ողիմպիական խաղերու կազմակերպման, երազելով որ բախտաւոր օր մը այդ խաղերը կը կատարուին Հայաստանի մէջ: Քրիսեանի նահատակութեամբ, անոր երազը դարձաւ կտակ եւ Հ.Ս.Ը.Ս.ական յաջորդական սերունդներ եղան այդ կտակին հաւատարիմ աւանդապահները:

Քրիսեանի գործակիցները, միութեան հիմնադիր սերունդը,

պատեհութիւնը չունեցաւ կտակին իրագործումը տեսնելու եւ բաւարարուեցաւ 1919-1921 հայկական ողիմպիական խաղերու կազմակերպումը շարունակելով Պոլսոյ մէջ: Հիմնականը սակայն, կտակը պահուեցաւ եւ իբրեւ սրբազան պարտք փոխանցուեցաւ Հ.Ս.Ը.Ս.ի Սփիւռքի ռահվիրաներուն: Հետեւաբար, երկրորդ ընծան կ'երթայ Պոլսոյ այդ սերունդին, որ ուղեցոյց եւ ներշնչարան եղաւ իր յաջորդներուն:

Հ.Ս.Ը.Ս.ի Հայէպի եւ Պէյրութի առաջին սերունդի ներկայացուցիչները եղան Քրիսեանի կտակին յաջորդ աւանդապահները, որոնք հայ կեանքի ամէնէն ծանր պայմաններուն մէջ, տարագրութեան եւ Ցեղասպանութեան զրկանքները ցմրուր ծաշակած, գերմարդկային ծիգերով ողիմպիական, միջմասնաճիւղային մարզախաղերու գաղափարը վերակենդանացուցին, ապրեցուցին եւ այդ մարզախաղերով վերագտան ամէն հարւածէ ետք վերապրելու, տոկալու եւ վերականգնելու հայ մարդուն գաղտնիքը: Հ.Ս.Ը.Ս.ական ընծա՛յ այդ սերունդին, որուն օրինակը շուտով վարակիչ դարձաւ միութեան այլ շրջաններու պատասխանատուներուն եւս:

Արդարեւ, Հ.Ս.Ը.Ս.ի համագաղութային կառոյցին ստեղծումով, միջմասնաճիւղային մարզախաղերը ընդհանրացան քիչ մը ամէն տեղ եւ իրարու քով գալու, միասին ըլլալու, իրարմով զօրանալու եւ յաղթել-պարտուելէ աւելի՝ Հ.Ս.Ը.Ս.ը յաղթական տեսնելու ցանկութիւնը դարձաւ համատարած երեւոյթ: Բայց եւ այնպէս, կտակը մընաց կտակ, օրին մէկը մարզախա-

դերը Հայաստանի մէջ կատարելու հեռանկարով: Դ.Ս.Ը.Ս.ական ընծայ մըն ալ, ուրեմն, այդ սերունդին, որ հայ կեանքի վերջին 35 տարիներուն Դ.Ս.Ը.Ս.ի մէջ ապրեցաւ ու գործեց այնպիսի եռանդով ու հաւատքով, որ երազը անպայման դառնայ իրականութիւն:

Բախտաւորը եղաւ միութեան չորրորդ սերունդը, որ ո՛չ միայն առիթը ունեցաւ նման մարգախաղերու Հայաստանի մէջ կազմակերպումը տեսնելու, այլեւ՝ կարողութիւնն ու լուրջ պատրաստութիւնը ունեցաւ այդ խաղերը, անոնց առաջնէ՛կը, լաւագոյն եւ գեղեցկագոյն ձեւով իրականացրնելու Արարատի շուքին: Բիւր ընծայ այդ սերունդին, համա-Դ.Ս.Ը.Ս.ական Ցրդ մարգախաղերը իրականացուցած Դ.Ս.Ը.Ս.ական «կամաւոր բանակ»ին, բոլորի՛ն անխտիր, առանց որոնց հաւաքական ջանքերուն դժուար թէ կարելի ըլլար միութեան պատմութեան էջերէն մէկը գրել այսքան փառքով ու պատիւով:

Ընծաներէն մեծագոյնը եւ կարելորագոյնը, սակայն, կ'երթայ մեր սքանչելի ժողովուրդին, որ անցնող 91 տարիներուն գիտցաւ ծնիլ սերունդներ, որոնք աւանդապահ մնացին Քրիստեանի կտակին, տեսիլքն ու կամքը ունեցան այդ կտակին իրականացման եւ ամէնէն կարելորը՝ անհրաժեշտ ձեռներէցութեամբ եւ վճռակամութեամբ ձեւ ու մարմին տուին անոր՝ համա-Դ.Ս.Ը.Ս.ական Ցրդ մարգախաղերով:

Դ.Ս.Ը.Ս. երախտապարտ կը մընայ իր հաւատաւոր համակիրներուն, որոնք գիտակցօրէն, բընագործէն, ամէն քայլափոխի իր կողքին են, յաճախ իրմէ առաջ են՝ Դ.Ս.Ը.Ս.ի ազգային նպատակներու իրականացման նախանձախընդրութեամբ:

Համա-Դ.Ս.Ը.Ս.ական մարգախաղերու յաջողութիւնը միաժամանակ ընծայ մըն է Հայաստա-

նին, Դ.Ս.Ը.Ս.ի մայր հայրենիքին, որ բաւական «տաք» ու «պաղ» տարիներէ ետք, այսօր գրկաբաց կ'ընդունի Չերագներու, Խոյեաններու, Եազմաձեաններու միութեան աշխարհասփիռ զաւակները, պետական նախարարութիւններով կ'ողջունէ անոնց ներկայութիւնը եւ իր մայրաքաղաքին սիրտը լայն կը բանայ խաղերու բացման մեծաշուք հանդիսութեան: Երագներ չեն այս բոլորը, այլ Դ.Ս.Ը.Ս.ի հզօրութեան, կազմակերպւածութեան եւ ազգային առողջ նկարագրին արտայայտութիւնը եղող իրականութիւններ, որոնց հասնելու համար սերունդներ տըքնած են ջանքով, դաստիարակութեամբ, գործով: Անհաշիւ գոհողութիւններ ցանած են, որպէսզի երբ ժամանակը գայ, հայութիւնն ու Հայաստանը քաղեն անոնց յաջողութիւնները: Դ.Ս.Ը.Ս.ը ծափահարուի, Դ.Ս.Ը.Ս.ով Հայաստանը փառաւորուի:

Այժմ կրնան հանգիստ ննջել Դ.Ս.Ը.Ս.ական մարգախաղերը Հայաստանի մէջ կատարելու երազը իրենց հետ Հալէպի, Գահիրէի, Լոս Անձելըսի թէ Սոնթրալի գերեզմանատուները տարած մեր մեծ երախտաւորները: Անոնց կրտսեր եղբայրները կրնան գոհունակութեամբ իրենց աչքերը փակել՝ տեսնելէ ետք Արարատի շուքին կատարուած մարգախաղերը, սակայն չեն կրնար, իրաւունք չունին հանգիստ ճանչնալու անոնց թողները, մեր մարզիկ-մարզիկուհիները, մինչեւ որ այդ մարգախաղերը չկատարեն կամ չտեսնեն ամբողջական հայրենիքի տարածքին, ա՛յն հայրենիքին, որ Շաւարշ Քրիստեանի իսկական երագն էր ու կտակը:

Կտակին մէկ մասն է, որ ցարդ իրագործուած է: Ձեզի ընծայ Դ.Ս.Ը.Ս.ական սերունդներ:

Կտակին մնացեալ մասը ձեզ կը սպասէ: Ձեզի ասպարէ՛զ Դ.Ս.Ը.Ս.ական սերունդներ:



ՄԵԾԱԳՈՅՆԸ, ԼԱԲԱԳՈՅՆԸ, ԳԵՂԵՑԿԱԳՈՅՆԸ

4. Աւագեան ՊԵՅՐՈՒԹ


Շատ բան կրնայ գրուիլ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ մարզախաղերուն մասին, սակայն երեք բառեր ամէնէն աւելի կրնան խտացընել ամբողջ գրուածն ու գրուելիքը. մեծագոյնը, լաւագոյնը, գեղեցկագոյնը:

Սկիզբէն մարտահրաւէրները մեծ էին, զանոնք յաղթահարելու կամքն ու պատրաստակամութիւնը՝ աւելի մեծ: Մաղերը առաջին անգամ ըլլալով տեղի պիտի ունենային Հայաստանի մէջ: Հ.Մ.Ը.Մ., որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական իր վերջին չորս բանակումները կատարած էր Հայաստանի մէջ, ծանօթ էր հայրենի սկաուտական կեանքին եւ անոր պահանջներուն, մարզական կեանքը, սակայն, իրեն համար կը մնար անծանօթ մը: Մանաւանդ որ, 1990ական տարիներու կարճատեւ փորձառութենէն ետք, Հ.Մ.Ը.Մ. մարզական կեանք չունէր Հայաստանի մէջ: Հետեւաբար, ի՞նչպէս կարելի էր մարզախաղեր կազմակերպել շրջանի մը մէջ, որ մարզիկ ու մարզական խումբ չունէր, մարզախաղեր կազմակերպելու առիթ իսկ չունէր:

Աւելին, հայրենի մարզական կառույցները որքանո՞վ կրնային բաւարարել արդեօք համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու պահանջները: Ի՞նչ համեմատութեամբ գործակցութիւն կրնար ըլլալ հայրենի մարզական ֆետերասիոններուն հետ: Հարցումներ էին ասոնք, որոնք իրենց պատասխանները կը փնտռէին բոլորին մօտ:

Կար նաեւ տնտեսական մարտահրաւէրը: Աշխարհի տնտեսական տագնապի ներկայ օրերուն, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերը եւ զանոնք պահող հայկական գաղութները որքանո՞վ ի վիճակի





էին նիւթական մեծամեծ դժուարութիւններ յաղթահարելով՝ բազմանդամ պատւիրակութիւններ ղրկել Հայաստան:

Այս բոլորը եւ տակաւին այլ մտահոգութիւններ մասամբ պիտի փարատէին Շաբաթ, 1 Օգոստոս 2009ի բացման մեծաշուք հանդիսութեամբ, որ իր յաջողութեամբ պիտի անցնէր բոլոր նախատեսուած թիւնները: Մարզախաղերու պատմութիւնը նման մեծաթիւ ներկայութեամբ բացման հանդիսութիւն չէր տեսած: Տողանցքը իր տեսակին մէջ եզակի էր, պատմական: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու առիթով, կամ նոյնիսկ Ա. Հանրապե-



տուլթեան օրերուն, Երեւանի փողոցներէն տողանցած էին սկաուտներ, սակայն երբեք՝ մարզիկներ: Այս առաջին անգամն էր: Խանդավառութիւնը մեծ էր, ուրախութիւնը՝ աննկարագրելի:

Առաջին անգամ ըլլալով նաեւ, խաղերը արբանեակային դրութեամբ կը սփռուէին ամբողջ աշխարհի տարածքին, աշխարհասփիւռ հայութեան առիթը տալով որ մասնակից դառնան Հ.Մ.Ը.Մ.ական այս իրազործումին: Բացումը միաժամանակ կը ներկայացուէր Հ.Մ.Ը.Մ.ի համացանցի կայք էջին միջոցով (www.homenetmen.org), որ այնուհետեւ օրը-օրին լաւագոյն արձագան-

գը հանդիսացաւ խաղերու առօրեային:

Լաւ սկիզբ մը կը յուշէր լաւ ընթացք:

Լաւ ընթացքի համար սակայն, անհրաժեշտ էին կարգ մը նախադրուեալներ. յարմարաւէտ կեցութեան դասաւորումներ, երթեւեկի դիւրութիւններ, խաղերու բժախնդիր կազմակերպում եւ մասնակիցներու կապուած իւրաքանչիւր հարցի հետեւողական հետապնդում:

Մարզախաղերու կազմակերպիչ մարմինը ճիգ չէր խնայած այս բոլորը լաւագոյնս կատարելու: Մասնակիցներու թիւը մեծ էր: Առաջին անգամ ըլլալով համա-Հ.Մ.Ը.Մ.ական





գամ ըլլալով համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը կ'ընդգրկէին թէ՛ պասքեթպոլի եւ թէ՛ ֆուլթպոլի մրցումներ: Ֆուլթպոլի 7 խումբեր, պասքեթպոլի 14 խումբեր, 22 լողորդներ, փինկփոնկի 22 մարզիկներ եւ ճատրակի 30 մրցորդներ օրական ճշդուած ժամերուն պէտք է

սուբիահայերն էին, որոնք յաճախ ներկայ կ'ըլլային մրցումներուն: Խաղերու լաւ կազմակերպման համար ապահովուած էին Հայաստանի լաւագոյն իրաւարարները: Պասքեթպոլի խաղերուն Սփիւռքէն եւս հրաւիրուած էին իրաւարարներ:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԼԻԱԶՕՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Միհրան Շիմշիրեան

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲ Մանուէլ Մարսէլեան, Արման Բիլեճեան, Վիգէն Աբէլեան, Օշին Փիրումեան, Յրաչ Շմաւոնեան

ՂԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ Վահրամ Դանիէլեան, Արմէն Կետիկեան, Մանուէլ Մարսէլեան

●Մարզական ընդհ. պատասխանատու- Վիգէն Աբէլեան

●Ֆուլթպոլի- Վազգէն Գալայճեան, Միսաք Թաթիկեան

●Պասքեթպոլի- Սեւակ Կարապետեան

●Լող, ճատրակ, փինկփոնկի- Արմանտ Բիլեճեան

ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹԻՒՆ Յասմիկ Սարգիսեան, Վերա Բարսեղեան

ԼՈՒՄԱՆԿԱՐՉՈՒԹԻՒՆ photoplanet.am

ՀԱՄԱՑԱՆՑԻ ԿԱՅՔ ԷՁ Վարուժ Միրզայեան

ՂԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԲԱԾՆԻ ՂԱՍԱԽՕՍՆԵՐ Գառնիկ Մկրտիչեան Կիրո Մանոյեան

ՂԱՆԴՈՎՆԵՐՈՒ ՂԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Անահիտ Գոլանճեան



հասնէին իրենց դաշտերը, ժամանակին սկսէին իրենց խաղերը եւ ժամանակին վերադառնալին կէսօրուան ճաշի՝ յետմիջօրէին դարձեալ դաշտեր ուղղուելու համար:

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. այս աշխատանքին յաջողութեան համար գործի լծած էր 75 հոգինոց «բանակ մը», որ պանդոկներու մուտքին անհրաժեշտ ցուցմունքները կու տար իրենց խաղերուն դաշտերն ու... ժամանակացոյցը փնտռող մարզիկներուն: Փոխադրակառքերու հետ «կապոյտ շապիկաւորներ»ը կ'ընկերակցէին մինչեւ դաշտեր, որոնց մուտքին մարզիկներն ու անոնց ընկերակցող հանդիսականները կը դիմաւորուէին այլ «կապոյտ շապիկաւորներ»ով, բոլորը Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամներ: Գործը կ'ընթանար ժամացոյցի ճշգրտութեամբ եւ հեղասահ կերպով:

Երեւոյթ էր մեծ թիւով հանդիսականներու ներկայութիւնը այս խաղերուն: Լա՛ւ երեւոյթ: Հանդիսականներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ, Շրջանային եւ Մեկուսի վարչութիւններու անդամներ, ծնողներ ու բարեկամներ: Երուսաղէմի պատուիրակութիւնը, առանձինն, իր հետ բերած էր 60 հոգինոց համակիրներու թիւ մը, որ խումբին կ'ընկերակցէր դաշտէ դաշտ: Նոյնը կարելի է ըսել Արեւմտեան եւ Արեւելեան Մ. Նահանգներու պատուիրակութիւններուն համար: Լիբանանի եւ Սուրիոյ պարագային, Հայաստան հաստատուած լիբանանահայերն ու



Թիւնը վստահուած էր Երեւանի ուսուցիչանութեան պահպանութեան ծառայութեան, որ մնայուն ներկայութիւն էր ամէնուրեք: Ոստիկաններ կը հսկէին նոյնիսկ... ճատրակի խաղերուն: Ոստիկանութեան կողքին, «պահպան հրեշտակի» դերով ներկայ էին բժիշկներն ու շտապ օգնութեան ինքնաշարժները, որոնք բարեբախտաբար շատ գործ չունեցան:

Մարզախաղերու յաջողութեան մէջ կարեւոր դեր ունէին հայրենի կարգ մը քրատուամիջոցները՝ «Հ1», «Երկիր Մետիա», «Արարատ», «Շանթ», «Կեդրոն» եւ այլն, որոնք ուղղակի հեռասփռումով թէ օրը-

օրին ներկայացուած անդրադարձներով բաւարար լուսարձակի տակ առին համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս մեծ իրադարձութիւնը:

Համացանցը ունեցաւ իր նշանակաւոր, ժամրժամուն ներկայացնելով բոլոր մրցումներուն արդիւնքները, նախորդ օրուան մրցումներուն նկարները եւ յաջորդ օրուան խաղերուն յայտագիրը: Երե-



ւանէն եւ Մ.Նահանգներէն յատուկ անձնակազմ մը հետեւեցաւ այս աշխատանքին:

Մարզախաղերուն յայտագիրը սկզբնական օրերուն, հասկնալիօրէն, եղաւ խճողուած: Հանգիստը սակայն չուշացաւ: Չորեքշաբթի, 5 Օգոստոսին, խաղերը կանգ առին եւ բոլորը մեկնեցան Սեւանայ լիճ՝ հանգիստ ու հաճելի ժամեր անցընելու: Սեւանայ լիճի յայտագիրը եղաւ կազդուրիչ եւ յաջորդ օր խումբերը իրենց խաղերուն վերսկսան նոր թափով ու խանդավառութեամբ:

Յաջորդ օր, յայտագիրը երկարեցաւ կէս օրուան վրայ, որովհետեւ յետմիջօրէին մարզիկ-մարզիկուհիները ունեցան դաստիարակչական ծրագիր, որմէ ետք անոնք այցելեցին Եղեռնի նահատակաց Ծիծեռնակաբերդի յուշահամալիր: Դաստիարակչական ծրագիրը եղաւ նորութիւն: Մարզախաղերու պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, բոլորը հաւաքուեցան միատեղ («Տինամօ» դաշտ) եւ լսեցին երկու դասախօսութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայ Դատի մասին: Դասախօսութիւնները ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Հ.Յ.Դ. Բիւրոյի Հայ Դատի եւ քաղաքական հարցերու զբաղմունքի պատասխանատու Կիրօ Մանոյեան:

Խաղերէն դուրս, պատուիրակութիւնները կատարեցին իրենց ազատ շրջապտոյտները: Եռաբլուրը, Սարդարապատը, Էջմիածինը, Խոր Վերապը, Գառնին եւ Գեղարզը եղան յիշատակելի այցելութիւններու հասցէներ:

Մեծագոյնը եւ լաւագոյնը ըլլալով կողքին, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճիշդ մարզախաղերը եղան նաեւ գեղեցկագոյնը: Բացման տպաւորիչ հանդիսութիւնը, անկասկած, իր դերը ունեցաւ այդ գեղեցկութեան մէջ, սակայն իսկական գեղեցկութիւնը

«ՉԱՐՉԱՐԱՆԱՅ ԱՊԱՇԽԱՐԱՆՔ»

Ըսելով սոր չէ, սակայն առաւելաբար Դայաստանի մէջ տարածուած ըլլալով, անծանօթ է սփիւռքահայ մարդուն:

«Չարչարանաց ապաշխարանք»ը համագոր է «Վարձք կատար» արտայայտութեան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ճիշդ մարզախաղերուն իրականացման համար «չարչարանաց ապաշխարանք» պէտք է ըսել խումբ մը մարդոց, որոնք իրենց քրտիկներով ու քսակով յաջողուցին մարզական այս մեծ իրադարձութիւնը:

● ԳԼԽԱՎՈՐ ԲԱՐԵՐՎՐՆԵՐ

Մարզախաղերու գլխաւոր բարերարներ հանդիսացան Տէր եւ տիկին Ժիրայր եւ Սրբուհի Սարգիսեաններ, Դրաչ եւ Էլիզապէթ Սիսեռեաններ, Ատոմ եւ Սելլա Թնճուկեաններ, Վարդան եւ Սապին Գազանճեաններ, Ճորճ եւ Մարի Տաքսեաններ եւ Էտուարտօ Էռնէքեան:

● ԱԶԱՎԿԻՑՆԵՐ

Միտրան Շիմշիրեան- «Մարզիկ»ի այս թիւին հետ ներկայացուած Տի.Վի.Տի.ի նիւթական հովանաւոր:

Գահիրէի Հ.Մ.Ը.Մ.-Արարատ մասնաճիւղ, Վարդ եւ Ալեքս Ալեքսանեաններ- բաժակներու եւ մետալներու պատրաստութիւն եւ նուիրատուութիւն:

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս մասնաճիւղ- պասքէթպոլի արդիւնքներու էլէկտրական տախտակներու ապահովում:

Սարգիս եւ Արամ Չոպանեաններ, Սալբի Ճճճեան- մարզախաղերու մասնակիցներուն բաժնուած «Հ.Մ.Ը.Մ.ական երգեր» Մի.Տի.ի պատրաստութիւն եւ նուիրատուութիւն:

Միսաք Թաթիկեան- մարզական գոյքեր:

Անահիտ Գոլանճեան- պանդոկներու դասաւորումներ:

Վարուժ Միրզայեան- համացանցի կայք էջի պատրաստութիւն:

Սթիւ Արթիսեան, Նայիրի Տէրտերեան- նիւթական հովանաւորներու ապահովման պոռճիւրի պատրաստութիւն:

Խաժակ եւ Ծովիկ Էլթիլեաններ- Մրցումներու ընթացքին մարզիկներուն տրամադրուած ջուրներու նուիրատուութիւն:

կը գտնուէր այլ տեղ. մասնակիցներու մօտ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական այս խաղերուն գեղեցիկ էր տեսնել հայր ու տղայ կողք-կողքի պասքեթպոլի նոյն խումբին մէջ: Փինկ-փոնկի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր մը եւ իր տղան եղան տիտղոսին գլխաւոր մրցակիցները, իսկ լոյի պարագային, ընտանիք մը ամբողջ մասնակցեցաւ խաղերուն: Կային նաեւ անոնք, որոնք հինգերորդ անգամ ըլլալով կը մասնակցէին համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու: Գեղեցկագոյն պատկերը, սակայն, պարզուեցաւ փակման հանդիսութեան, ուր յա-

ջորդաբար դաշտ ներկայացան չորս երիտասարդներ՝ իրենց վաստակաշատ ծնողներուն անունով իրենց բարերարութեան բաժակները յանձնելու համար արժանաւորներուն: Սերունդներու հերթափոխութեան պատկերն էր, որ այդ օր դրսեւորուեցաւ Սարգիսեան, Սիսեռեան, Թնճուկեան եւ Գագանճեան ընտանիքներու ընդմէջէն: Պատկեր մը, որ ցանկալի է որ կրկնուի բոլոր ժամանակներուն, ամէն տեղ:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ մարզախաղերուն նուիրուած այս ակնարկը կարելի է փակել առանց անդրադառնալու այն միջոցովին,

զոր մասնակիցները ստեղծեցին դաշտերէն ներս եւ դուրս: Աւստրալացիները իրենց քանկուրոյով, Ֆրանսացիները իրենց «այլ՝, այլ՝» ներով, արժանիցիք «օլ՝, օլ՝» ներով, իսկ լիբանանցիները «Հայրերիք» ու ներկայացուցին «գոյնգոյն» հայութեան մը պատկերը, որ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշով միացած՝ միասնութեան շուրջ պարը պարեց յաղթանակի իր ճաշկերոյթ-պարահանդէսին, այժմէն պատրաստուելով գայլիք նոր յաղթանակներու:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Մարզախաղերու բացման նախօրեակին, 31 Յուլիսի կէսօրին, Երեւանի «Մարիոթ» պանդոկի ժողովասրահին մէջ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեանի, մարզախաղերու յանձնախումբի ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանի եւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեանի: Մամլոյ ասուլիսին ներկայ գտնուեցան հայրենի լրագրողներ եւ պատկերասփիւռի կայաններու ներկայացուցիչներ:



Եղբայրներ Հրաչ Շմաւոնեան, Միհրան Շիմշիրեան եւ Մանուէլ Մարսէլեան:

Թիւնը, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի հիմնադրութիւնը Հայաստանի մէջ եւ համաշխարհային սկստական շարժումին անդամակցութիւնը: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ. 100 մասնաճիւղեր եւ 25 հազար անդամներ ունի աշխարհի տարածքին: Եղբ. Շիմշիրեան նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Տրդ մարզախաղերը Հայաստանի մէջ կատարելու կարեւորութիւնը, մա-

նաւանդ երիտասարդ սերունդին համար, որուն առիթը ընծայուած է հայրենիք այցելել եւ հայրենի հողին վրայ մարզախաղերուն մասնակից դառնալ:

Վերջին խօսքը փոխանցեց եղբ. Մանուէլ Մարսէլեան: Ան յայտնեց, որ մարզախաղերու մասնակցութեան կողքին, մարզիկները պիտի ունենան դաստիարակչական յայտագիր մը, որմէ ետք անոնք պիտի այցելեն Միծեռնակաբերդի յուշահամալիր, իրենց յարգանքի տուրքը մատուցելու Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին: Մարզիկները առիթը պիտի ունենան նաեւ այցելելու Սեւանայ լիճ եւ ամբողջ օր մը անցընելու Սեւանի ափին: Եղբ. Մարսէլեան նշեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն կրնան մասնակցիլ միայն Հ.Մ.Ը.Մ.ի անդամակցած մարզիկներ եւ շեշտեց, որ մարզախաղերը սիրողական մակարդակի են:

Լրագրողներու հարցումներուն պատասխանելով, մամլոյ ասուլիսի աւարտին, եղբ. Հրաչ Շմաւոնեան ընդհանուր տեղեկութիւններ տուաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամներու թիւին եւ գործունէութեան մասին:

Բացման խօսքով հանդէս եկաւ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան ողջունեց ներկաները եւ յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ի 91ամեայ պատմութեան մէջ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենան Հայաստանի մէջ: Մարզախաղերը կ'ընդգրկեն 5 մարզաձեւեր՝ ֆութպոլ, պասքեթպոլ, փինկ-փոնկ, ճատրակ եւ լող: Ան նշեց, որ Հայաստանէն եւ Սփիւռքէն 450 մարզիկներ եւ պատասխանատուներ կը ժամանեն Հայաստան, այս մարզախաղերուն մասնակցութեան համար: Եղբ. Շմաւոնեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց մարզախաղերու յաջողութեան աջակցած բոլոր անձնաւորութիւններուն, յատկապէս՝ Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնին:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան: Ան ամփոփ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի ծնունդն ու առաքելու-



ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

ԵՐԵՒԱՆԻ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ» ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ՎՐԱՅ

Սերունդներու եւ տարիներու երազ մը իրականացաւ Շաբաթ, 1 Օգոստոս 2009ին, համա-Հ.Ս.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերու պաշտօնական բացումով, Երեւանի «Հանրապետութեան» հրապարակին վրայ, ներկայութեամբ պետական ներկայացուցիչներու, հայկական մարզաշխարհի երեւելի դէմքերու, Հ.Ս.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ներկայացնող պատուիրակութիւններու, մարզիկ-մարզիկուհիներու եւ հրապարակը ամբողջութեամբ լեցուցած հայորդիներու:

Հ.Ս.Ը.Մ.ի դրօշը այդ օր ծիածան կապեց Երեւանի վերեւ, ուր 8 օրեր շարունակ, մարզական ոգելորութեան եւ ազգային հպարտութեան մթնոլորտի մէջ, աշխարհի տարբեր երկիրներէ աւելի քան 450 մարզիկներ եւ մարզական պատասխանատուներ իրարու քով եկան, իրարու հետ մրցեցան, յաղթեցին ու պարտուեցան, եւ երկու պարագային ալ հայրենի հողին ուժով զօրացած՝ դարձան այն պատկառելի ամբողջութիւնը, որ իբրեւ «տորմիդ հրաթեւ» հայկականութեան եւ կենսունակութեան աղբիւր հանդիսացաւ զինք ծնող ժողովուրդին:

Համա-Հ.Ս.Ը.Մ.ական ճրդ մարզախաղերու բացման հանդիսութեան պատմական ու անմոռանալի տողանցքին ի տես՝ սիրտեր թրթռացին, հոգիներ հրճուեցին եւ դժուար եղաւ տեսնել Եռագոյնի կողքին Հ.Ս.Ը.Մ.ի դրօշին արժանաւոր ծածանումը՝ առանց երջանկութեան արցունքի կաթիլներ նկատելու հայրենաբաղձ Հ.Ս.Ը.-Մ.ականներու կոպերուն վրայ:



Հանդիսութեան ներկայ պաշտօնական հիւրերը:

Թումանեան փողոց ու ժամանեցին Հանրապետութեան հրապարակ: Տողանցող շարքերը առաջնորդեց Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան շեփորախումբը:

Ճամբու ամբողջ երկայնքին, տողանցողները արժանացան ժողովուրդի ջերմ ծափերուն: Փոխադարձաբար, իբրեւ յիշատակ, անոնք մարզական թիւըրթներ նետեցին ներկաներուն:

նական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Միհրան Շիմշիրեան, Հրաչ Սիսեռեան, Վահրամ Դանիէլեան, Արմէն Կէտիկեան, Յարութ Յարութիւնեան, Գարլոս Սէֆէրեան, Կեղրոնական Վար-

ՀԱՆԴԻՍԱԿՈՐ ՏՈՂԱՆՑՔԸ

Բացման հանդիսութիւնը ընթացք առաւ երեկոյեան ժամը ծին, մարզախաղերու մասնակից մարզիկներուն տողանցքով: Հիւրընկալ Հայաստանի կողքին, աշխարհի 15 երկիրներէ՝ Աւստրալիայէն, Արեւելեան եւ Արեւմտեան Միացեալ Նահանգներէն, Գանատայէն, Հարաւային Ամերիկայէն, Լիբանանէն, Սուրիայէն, Ադրբայձեյնէն, Գահիրէէն, Երուսաղէմ-Հայֆա-Եաֆայէն, Փարիզէն, Լոնտոնէն, Պուլկարիայէն, Հունգարիայէն եւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութենէն ժամանած աւելի քան 450 մարզիկներ, մարզիչներ եւ վարչական պատասխանատուներ, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի սկաուտներու գլխաւորութեամբ, Երեւանի Հիւսիսային պողոտայէն տողանցեցին դէպի

ՊԱՏՈՒՈՅ ՀԻՒՐԵՐԸ

Բացման հանդիսութեան հետեւելու համար հրապարակը ողողած էր 30 հազար հաշուող ժողովուրդ մը: Պատուոյ հիւրերու շարքին էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Սիոն Եպս. Աղամեան, Հայաստանի մարմնակրթութեան եւ երիտասարդութեան նախարար Արմէն Գրիգորեան, Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեղրո-





Հրավառութիւն:



Նախարար
Հրանոյշ
Յակոբեան:



Սիոն եպս. Աղամեան:

չութեան նախկին ատենապետ Բիւզանդ Թորիկեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ Հրաչ Շմաւոնեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչներ, Երեւանի փոխ քաղաքապետներ Կամօ Աժէեան եւ Տարօն Մարգարեան, ինչպէս նաեւ ողիմպիական տրոտղոսներու տիրացած հայրենի մարզիկներ:

կիրարկած մարզաձեւերը եւ արձանագրած յաջողութիւնները:

Բոլոր երկիրներու մասնակիցներուն հրապարակ մուտքէն ետք, ուղղակի պատկերասփռուող բացման հանդիսութիւնը սկսաւ Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգներով՝ շեփորախումբին կատարողութեամբ:

ԲԱՅՄԱՆ ԽՕՍԲԸ

Օրուան հանդիսավարներ Կարէն Կիւրոյեան եւ Զարուհի Կարապետեան բացման խօսքով ծանօթացուցին Հ.Մ.Ը.Մ-ի նպատակն ու դերակատարութիւնը: Ապա, անոնք կատարեցին համա-Հ.Մ.Ը.Մ-ական մարզախաղերու պատմականը եւ խօսեցան ճիշդ մարզախաղերու մասնակից չըրջաններուն մասին, թուելով անոնց

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՕՐ ՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Ամենայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոսին օրհնութեան խօսքը փոխանցեց Սիոն եպս. Աղամեան, ըսելով, որ «Թող Աստուած ձեզ օրհնի եւ պահպանի ձեր ինքնութեան մէջ, հայրութեան մէջ եւ դուք հաստատուն լինէք այն բոլոր արժէքների մէջ, որոնցմով երդուել էք հաւատարիմ մնալ մեր ժողովրդին, հայ եկեղեցուն եւ մեր սուրբ հայրենիքին»:





**Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի
ատենապետ
եղբ. Զրաչ Շմալունեան:**



**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան ատենապետ
եղբ. Գրիգորիս Պողարեան:**



Նախարար Արմէն Գրիգորեան:



**Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան
անդամ եղբ. Սիիրան Շիմշիրեան:**



**Երեւանի քաղաքապետ
Գագիկ Բեգլարեան:**

**ՍՓԻՌԻՔԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍԻԻ ԽՕՍՔԸ**
Խօսք առաւ Սփիւռքի նախարար
Հրանտյ Յակոբեան եւ բարի գա-
լուստ մաղթեց մարզախաղերու
մասնակիցներուն: Ան ըսաւ, որ այ-
սօր ցնծութեան օր է Երեւանի հա-
մար, որովհետեւ 450 երիտասարդ-
ներ եւ պատասխանատուներ եկած
են իրենց ուժը փորձելու: «Ես կար-
ծում եմ, որ դուք երբեւէ չէք պարտը-
ւելու: Հայրենի հողի վրայ հնարա-
ւոր չէ պարտուել: Դուք բոլորդ յաղ-
թանակ էք տանելու: Ես շնորհաւո-
րում եմ այդ յաղթանակի աւթիւ»,
յայտնեց ան եւ աւելցուց. «Ուզում
եմ շնորհակալ լինել, որ դուք օտար
ափերում, հայրենիքից դուրս, շա-
րունակում էք հաւատարիմ մնալ
հայի ինքնութեանը, հաւատարիմ
մնալ հայ ազգին, հայ պետութեանը
ու հայ ժողովրդին: Դուք ձեր գոր-
ծունէութեամբ նուիրուել էք եւ շա-

րունակելու էք օտար ափերում կեր-
տել հայոց պատմութիւնը, հայ ժո-
ղովրդի պատմութիւնը: Ես ուզում
եմ որ դուք միշտ հպարտ հայ մնաք,
աշխարհի որ ծայրն էլ որ լինէք»:

**ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ
ԵՒ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՒ
ՆԱԽԱՐԱՐԻՆ ԽՕՍՔԸ**

Յաջորդեց մարմնակրթութեան
եւ երիտասարդութեան հարցերու
նախարար Արմէն Գրիգորեանի խօս-
քը: Ան իր գլխաւորած նախարարու-
թեան, Հայաստանի Ազգային Ոլիմ-
պիական Կոմիտէին եւ հայ մարզաշ-
խարհին անունով շնորհաւորեց
Հ.Մ.Ը.Մ-ը՝ իր մարզախաղերը Հա-
յաստանի մէջ կազմակերպելու հա-
մար: «Անգնահատելի է Հ.Մ.Ը.Մ-ի
դերը երիտասարդների Ֆիզիքական
դաստիարակութեան գործում»,
ըսաւ ան եւ յայտարարեց, թէ Հա-

ԵՐԱԶ, ԲԱՅՑ ՈՉ ԱՆԻՐԱԿԱՆԱՆԱԼԻ

**(Յ.Ս.Ը.Մ.Ի ԿԵՂԴՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂԲ. ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈՂԱՐԵԱՆԻ ԽՕՍԵԸ՝
ՄԱՐԶԱԽԱՆԵՐՈՒ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)**

Այսօր հաւաքուած ենք հոս՝ կատարելու համա-Յ.Ս.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերուն պաշտօնական բացումը: Մարզախաղերուն սոսկական թուարկումը սակայն հարազատօրէն չի ցոլացըներ այս մարզախաղերուն առթած հոգեվիճակը: Արդարեւ, հայութեան եւ համայն մարդկութեան ապրած ճգնաժամային մէկ պահուն՝ հայութեան ծոցէն ծնած այս միութիւնը, որ աւելի քան 90 տարի բարձր պահած է հայկական Եռագոյնը աշխարհի չորս ծագերուն, առաջին անգամ ըլլալով է որ առիթը կ'ունենայ իր մարզիկներէն ու մարզասեր անդամներէն աւելի քան 450 հոգի հաւաքելու հայրենի հողին վրայ:

Առիթ, որ կու գայ առաւել եւս գօտեպնդելու Յ.Ս.Ը.Մ.ականը՝ հաւատարիմ մնալու Հայաստանեայց Եկեղեցիին, ծառայելու ազգին ու հայրենիքին եւ վերանորոգելու իր ուխտը՝ գործելու անդու, մինչեւ որ «կատարն հայրենի լերանց հեռագոյն» կարելի ըլլայ կոթողել «դրօշն Եռագոյն»: Վստահ ենք, որ մեր միւս երազը, Արցախի հողին վրայ ունենալու համա-Յ.Ս.Ը.Մ.ական խաղեր, պիտի իրականանայ մօտիկ ապագային, ազատ Արցախի պետութեան, հայրենի պետականութեան եւ Յ.Ս.Ը.Մ.ի միացեալ ջանքերով:

Մեր երազները սակայն հոս կանգ չեն առներ: Տակաւին կ'երագենք նմանօրինակ խաղեր կազմակերպել օր մը Սասնոյ աշխարհին, Վանի, եւ ինչու ոչ, վերանորոգուած Անիի մէջ: Երազ՝ այո, բայց ոչ անիրականանալի, երբ գոյութիւն ունին կամքն ու զոհաբերութեան ոգին: Փաստ՝ Յ.Ս.Ը.Մ.ի 90ամեայ երթը, եւ հոս ներկայ Յ.Ս.Ը.Մ.ականներուն վճռակամութիւնը եւ ապագայի նկատմամբ հաստատակամ եւ հաստատաքայլ յառաջանալու աննկուն կամքը:

Առայժմ սակայն մէկդի թողունք երազը ու կերտենք եւ ըմբռնենք ներկան, համա-Յ.Ս.Ը.Մ.ական 8րդ մարզախաղերը, հայրենի հողին վրայ, հայութեամբ առլի, Յ.Ս.Ը.Մ.ով զօրացած, «Բարձրացի՛ր-բարձրացուր»ի հրամայականին անսալով:



յաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէն որոշած է համա-Յ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերուն համար հաստատել շրջուն բաժակի դրօշիւն: Բաժակը պիտի տրուի «մարզական լաւագոյն պատուիրակութեան»՝ անոր, որ պիտի խլէ առաւելագոյն թիւով մրցանակներ ու բաժակներ:

Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԻԸ

Մարզախաղերու հիւրընկալ շքրջանին խօսքը փոխանցեց Հ.Ս.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան: Ան յոյս





յայտնեց, որ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոգ մարզախաղերը կը դառնան հզօրացման նոր ազդակ եւ կը նպաստեն հայրենիք-Սփիւռք կապերու սերտացման ու ամրապնդման: «Այս մարզական մրցապայքարում պարտըտողներ չեն լինելու, յաղթելու է ամենակարեւորը՝ համազգային սիրոյ եւ միասնութեան ոգին», ըստ ան:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան: Ան



նչեց ծրոգ մարզախաղերուն իւրայատկութիւնը՝ նկատի ունենալով, որ անոնք առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենան Հայաստանի մէջ: Եղբ. Պողարեան յայտնեց, որ ասիկա առիթ է ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականներուն վերանորոգելու իրենց ուխտը՝ հաւատարիմ մնալու Հայաստանեայց Եկեղեցիին, ծառայելու ազգին ու հայրենիքին եւ գործելու անդուլ,

մինչեւ որ «կատարն հայրենի լեռանց հեռագոյն» կարելի ըլլայ կոթողել «դրօշն Եռագոյն»:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ՕՐ ՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոս մարզախաղերուն առիթով յղած էր իր օրհնութեան խօսքը,

ՅԱՂԹԵԼՈՒ Է ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍԻՐՈՅ ԵՒ ՄԻԱՄՆՈՒԹԵԱՆ ՈԳԻՆ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳՐԱՉ ՇՄԱՒՈՆԵԱՆԻ ՈՂՁՈՅՆԻ ԽՕՍԲԸ՝ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Սրբազան Հայր, Յարգարժան պետական այրեր, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Կենտրոնական Վարչութեան պատուարժան անդամներ, մարզախաղերի կազմակերպիչներ ու մարզիկներ, հայ դիւցազուններ եւ հայրենակիցներ,

Հայաստանի Ազգային Սկաւտական Կազմակերպութեան անունից թոյլ տուէք շնորհաւորել Հ.Մ.Ը.Մ.ի 91ամեայ պատմութեան ընթացքում առաջին անգամ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը համայն հայութեան մայրաքաղաք Երեւանում կազմակերպելու եւ անցկացնելու կապակցութեամբ:

Հպարտութեամբ պետք է նշել, որ այս մարզախաղերը, յիրաւի, ազգանպաստ եւ կարելոր իրողութիւն են:

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն իր երկարամեայ գործունեութեան ընթացքում զգալի ներդրում ունի հայապահպանութեան, հայութեան ֆիզիքական եւ հոգեւոր զօրացման պատուաբեր ասպարեզներում: Հ.Մ.Ը.Մ.ը սերունդներին է փոխանցում զօրեղ ու առողջ հայ լինելու երջանկութիւնը:

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ, ես հաւատում եմ, որ այս օրերին դուք ձեռք կը բերէք նոր ընկերներ, բարեկամներ, առաւել կը սիրէք իր պետականութիւնը վերականգնած մեր ազատ ու անկախ Հայաստանը:

Ես համոզուած եմ, որ այս գեղեցիկ միջոցառումը կը դառնայ զօրացման նոր ազդակ եւ հերթական անգամ կը նպաստի Հայաստան-Սփիւռք կապերի սերտացմանն ու ամրապնդմանը:

Յարգելի հայրենակիցներ, մէկ անգամ ես շնորհաւորում եմ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոգ մարզախաղերի մեկնարկի կապակցութեամբ: Վստահ եմ, որ հայրենի հողի հզօրութեան կենսաւիշջ ձեր երակներում, մեր հնօրեայ եւ նորօրեայ հերոսների ուժը ձեր հոգում ու բազուկներում, օտար ափերում կը շարունակուի հոսել՝ ձեզ հաղորդելով ազգային արժանապատուութիւն եւ հզօրութիւն:

Այս մարզական մրցապայքարում պարտուողներ չեն լինելու, յաղթելու է ամենակարեւորը՝ համազգային սիրոյ եւ միասնութեան ոգին:

Ուրեմն, թող յաղթի սերը, թող յաղթի մեր միասնականութիւնը:

զոր ընթերցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան: Արամ Ա. Կաթողիկոս իր խօսքին մէջ նախ կ'ողջունէր Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, որ իր աշխարհացրիւ անդամները դարձեալ հաւաքած է հայրենի հողին վրայ՝ հաւատարիմ իր որդեգրած սկզբունքներուն, դաւանած արժէքներուն ու հետապնդած երազներուն: Ապա, ան կ'ոչ կ'ողջէր բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, ներկայ թէ բացակայ, միութեան հիմնադիրներուն օրինակով եւ անցնող տասնամեակներու բոլոր տիպար Հ.Մ.Ը.Մ.ականներուն ծառայութեան ճամբով շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի ազգակերտ ու հայրենաշէն առաքելութիւնը:

ՄԱՐԶԱԿԱՆ ԵՐԴՈՒՄԸ
Այնուհետեւ, մարզախաղերու մասնակից մարզիկներուն անունով Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկին երգումը կատարեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի անդամներէն եղբ. Վիգէն Յովհաննիսեան:

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԳԱԳԻԿ ԲԵԳԼԱՐԵԱՆԻ ԽՕՄՔԸ
Վերջին խօսքը արտասանեց Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեան: Ան ողջունեց աշխարհի տարբեր կողմերէն համայն հայութեան մայրա-

քաղաք ժամանած մարզասէրները, «ովքեր իրանց հետ բերել են նաեւ սփիւռքահայ մեր բազմահազար հայրենակիցների կարօտն ու ջերմութիւնը»:

«Այսօր,- շարունակեց քաղաքապետը,- մայրաքաղաքի գլխաւոր հրապարակում ենք՝ միասին ազդարարելու հայապահպանութեան գործում իր ուրոյն դերն ու տեղը ունեցող կազմակերպութիւններից մէկի՝



Երեւանի քաղաքապետը Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու հետ:



այ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը համաշխարհային մարզական եւ սկաուտական կազմակերպութիւն է: Հիմնադրուած լինելով 1918 թ.ին Կոստանդնուպոլսում՝ Հ.Մ.Ը.Մ.ը 91 տարի շարունակ ծառայել է հայ երիտասարդութեան մտաւոր եւ ֆիզիքական զարգացմանը: Միութեան նշանաբանն է «Բարձրացիր-բարձրացրու»:

Այսօր Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի 25 երկրներում ունի 100 մասնաճիւղ եւ 25 հազարից աւելի անդամներ:

Հ.Մ.Ը.Մ.ի 90ամեայ պատմութեան ընթացքում առաջին անգամ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը տեղի են ունենում Հայաստանում, 2009 թ.ի Օգոստոսի 1-8ը: Մարզախաղերին մասնակցում են աշխարհի տարբեր ծայրերից Երեւան ժամանած շուրջ 450 մարզիկներ, որոնց ընկերակցում են նրանց ընտանիքի անդամներն ու բարեկամները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուներ եւ համակիրներ, որոնք եկել են խաղերին ներկայ գտնուելու եւ քաջալերելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան հովանաւորութեամբ կազմակերպուող համա-Հ.Մ.Ը.-



Յ.Յ.Դ. Բիրոյի անդամ Վահան Յովհաննիսեան, Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան:

90ամեայ Հ.Մ.Ը.Մ-ի մարզախաղերի մեկնարկը: Միուժին, որ կարողացաւ տասնամեակներ շարունակ ո՛չ միայն դաստիարակել իր զաւակներին ազգային վսեմագոյն արժէքներով, այլեւ՝ նրանց մէջ սերմանեց ազգասիրութեան եւ հայրենանուիրումի գաղափարները»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի դերն ու նպատակը բնութագրելով, քաղաքապետ Բեգլարեան ըսաւ. «Գնահատել Հ.Մ.՝

Ը.Մ-ի դերը ազգապահպանման գործում դժուար է: Հայաստանի վերանկախութիւնից յետոյ այդ միութիւնը իր առաջին հայեացքը ուղղեց դէպի հայրենիք, գիտակցելով որ Հայաստանը նոյնպէս պէտք է ունենայ հայրենասէր եւ Ֆիզիքապէս առողջ երիտասարդութիւն»:

Բացուած յայտարարեց համա-Հ.Մ.Ը.Մ-ական ճրգ մարզախաղերը:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին յաջորդեց մէկուկէս ժամնոց տօնական գեղարուեստական յայտագիր մը, մասնակցութեամբ հայրենի արուեստագէտներու, երգի ու պարի խումբերու:

Հանդիսութիւնը փակուեցաւ երեկոյեան ժամը 11ին, հրավառութեամբ:

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՑՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ (ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԽՕՍՔ՝ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ, ՕՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍԱՎԱՐՆԵՐ ԿԱՐԵՆ ԿԻՒՆՅԵԱՆԻ ԵՒ ՉԱՐՈՒՅԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆԻ ԿՈՂՄԵ)

Մ.ական մարզախաղերը միշտ սպասուած եւ յաջողութեամբ աւարտող աւանդոյթ են, որի ընթացքում հարիւրաւոր հայ երիտասարդներ աշխարհի չորս ծայրերից մէկտեղուում են, որպէսզի մրցեն, բարեկամանան եւ ամրապնդեն իրենց հայ լինելը: Մարզախաղերը կազմակերպուում են չորս տարին մէկ՝ Զ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ ունեցող որեւէ երկրում:

Խաղերի ընթացքն յաւուր պատշաճի կազմակերպելու համար ձեւաւորուել է յանձնախումբ՝ բաղկացած Հայաստանի եւ Սփիւռքի Զ.Մ.Ը.Մ.ականներից.

- Մանուել Մարսելեան
- Յրաչեայ Շմաւոնեան
- Օշին Փիրումեան
- Արմանտ Զիլեճեան
- Վիգէն Աբելեան

Մարզախաղերը ներառում են հետեւեալ 5 մարզածեւերը.

- Պասքեթպոլ- տղամարդկանց, կանանց
- Ֆութպոլ- տղամարդկանց
- Փինկ-փոնկ- տղամարդկանց, կանանց
- Լող- տղամարդկանց, կանանց
- Ճատրակ- տղամարդկանց, կանանց
- Մարզախաղերի մասնակիցները ներկայացնում են Զ.Մ.Ը.Մ-ի հետեւեալ 15 շրջանները.
- Աւստրալիա- պասքեթպոլ
- Արեւելեան Մ. Նահանգներ- պասքեթպոլ, ֆութպոլ, լող
- Արեւմտեան Մ. Նահանգներ- պասքեթպոլ, ֆութպոլ, լող, ճատրակ, փինկ-փոնկ
- Լոնտոն- ֆութպոլ
- Պուլկարիա- լող, ճատրակ, փինկ-փոնկ
- Հունգարիա- ճատրակ
- Գահիրէ- պասքեթպոլ
- Ադրբայճան- պասքեթպոլ
- Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա- ֆութպոլ, լող, ճատրակ, փինկ-փոնկ

- Լիբանան- պասքեթպոլ, ֆութպոլ
- Գանատա- պասքեթպոլ, փինկ-փոնկ
- Հարաւային Ամերիկա- ֆութպոլ, փինկ-փոնկ
- Հայաստան- լող, ճատրակ, փինկ-փոնկ
- Սուրիա- պասքեթպոլ, լող, ճատրակ
- Ֆրանսա, Փարիզ- պասքեթպոլ, ֆութպոլ, լող, ճատրակ, փինկ-փոնկ

Խաղերին մասնակցում է նաեւ Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւնը՝ պասքեթպոլ, լող, ճատրակ, փինկ-փոնկ:

Մարզախաղերի ընթացքում նախատեսուած է շրջագայութիւն դէպի Սեւանայ լիճ: Մարզիկները կ'այցելեն նաեւ Ծիծեռնակաբերդ, որտեղ իրենց յարգանքի տուրքը կը մատուցեն Մեծ Եղեռնի զոհերի յիշատակին:

Մինչ այսօր խաղերը կազմակերպուել են ստորեւ նշուած երկրներում.

- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 7րդ մարզախաղեր, 24-31 Յուլիս 2005, Աթէնք, Յունաստան:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 6րդ մարզախաղեր, 11-16 Օգոստոս 2001, Պէյրութ, Լիբանան:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 5րդ մարզախաղեր, 31 Յուլիս-10 Օգոստոս 1997, Ուաշինկթըն եւ Նիւ Ճըրզի, Ամերիկայի Միացեալ Նահանգներ:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 4րդ մարզախաղեր, 9-18 Յուլիս 1993, Թորոնթօ եւ Մոնթրէալ, Գանատա:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 3րդ մարզախաղեր, 12-16 Ապրիլ 1989, Վալանս, Ֆրանսա:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական 2րդ մարզախաղեր, 2-7 Յուլիս 1985, Լոս Անճելըս, Ամերիկայի Միացեալ Նահանգներ:
- Համա-Զ.Մ.Ը.Մ.ական առաջին մարզախաղեր, 26 Յունիս-5 Յուլիս 1981, Թորոնթօ եւ Մոնթրէալ, Գանատա:

ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՏՈՂԱՆՅՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ





ԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐԸ



«Արատտա»



Ինգա եւ Անոյշ Արշակեաններ



Լէյլա Սարիբէկեան



Նարեկ Բաւէեան



«Արագի» տիոլահարներու խումբը



«Սպայի Տան» խումբը



Արսեն
Գրիգորեան



Մկրտիչ Մկրտիչեան
(Մակիչ) եւ
Դաւիթ Ամալեան



Այտա Սարգսեան



Ռուզան
Աւետիբեան



Ալլա
Նաւասարդեան



«Շիրխանի» պարի համոյթ



ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՓԻՒՌՔՈՎ ԶՕՐԱԻՈՐ Է, ԻՍԿ ՍՓԻՒՌՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՎ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱԳԱԸ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ, ԸՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՎ



ամա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը ներկայացնող բազմանդամ պատուիրակույթին մը Չորեքշաբթի, 5 Օգոստոսին այցելեց Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանին: Պատուիրակույթեան մաս կազմեցին մարզախաղերուն առիթով Երեւան գտնուող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրները, մարզախաղերու կազմակերպիչ մարմնի անդամները եւ շրջաններու ներկայացուցիչները, ընդամէնը՝ 29 հոգի:

Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակույթիները ընդունելով, նախագահ Սարգսեան ողջունեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը Երեւանի մէջ կազմակերպելու որոշումը եւ ընդգծեց, որ մարզախաղերուն արդիւնքներէն աւելի կարեւոր է սփիւռքահայ երիտասարդութեան շփումը հայրենիքին հետ: «Հայաստանը Սփիւռքով զօրաւոր է, իսկ Սփիւռքը՝ Հայաստանով», շեշտեց ան եւ խօսեցաւ սիրողական ձեւով կիրարկուող մարզախաղերու զարգացման անհրաժեշտութեան մասին:

Ապա, նախագահ Սարգսեան անդրադարձաւ հայույթիները յուզող օրուան հրատապ հարցերուն՝ Արցախի հարցին լուծման եւ հայ-թրքական յարաբերութիւններուն մասին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ խօսք առաւ ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան: Ան ներկայացուց միութեան հայանուէր աշխատանքներու տասնամեակներու վաստակը եւ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. աշխարհասփիւռ իր 25 հազար անդամներով այսօր, աւելի քան երեք, իր աչքերը յառած է հայրենիքին՝ նոր սերունդը ազգային առողջ դաստիարակութեամբ կազմաւորելու ջանքով:

50 վայրկեան տեւած այցելութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը նախագահ Սերժ Սարգսեանին յանձնեց յուշանուէր մը:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՑ ՅԱԿՈՒԲԱՆԻՆ

Նախագահ Սերժ Սարգսեանին տրուած այցելութիւնը կանխեց Հ.Մ.Ը.Մ.ական պատուիրակութեան մը այցելութիւնը Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանին: Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Միհրան Շիմշիրեան, Վահրամ Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, «Մարզիկ» պաշտօնաթերթի խմբա-



գիր եղբ․ Վիգէն Աւագեան եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ մարզախաղերու կազմակերպիչ մարմնի ատենապետ եղբ․ Մանուէլ Մարսէլեան:

Մէկ ժամուան այցելութեան ընթացքին, նախարար Հրանոյշ Յակոբեան Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան ներկայացուց իր նախարարութեան կատարած աշխատանքները եւ յառաջիկայի ծրագրերը: Ապա, ան գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի «անփոխարինելի դերը» նոր սերունդի հաւաքական կեանքի վարժեցման եւ հայապահպանման գործին մէջ:



Պատուիրակութիւնը, իր կարգին, նախարար Յակոբեանին ծանօթացուց հայրենիքի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ծաւալած աշխատանքները եւ կարեւորութեամբ նշեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը Հայաստանի մէջ կազմակերպելու քայլը: Այս առիթով, պատուիրակութիւնը շնորհակա-

լուծիւն յայտնեց Սփիւռքի նախարարութեան՝ մարզախաղերուն իր ունեցած նպաստին համար:

Հանդիպման աւարտին, տեղի ունեցաւ յուշանուէրներու փոխանակում՝ Հ.Մ.Ը.Մ.ի պատուիրակութեան եւ նախարար Հրանոյշ Յակոբեանի միջեւ:

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ԵՒ ՀՐԱՅՐ ՄԱՐՈՒԽԵԱՆԻ ՇԻՐԻՄՆԵՐՈՒՆ

Սփիւռքի նախարարին եւ Հայաստանի նախագահին տրուած այցելութիւններէն ետք, Հ.Մ.Ը.Մ. յարգանքի իր տուրքը ընծայեց Հայաստանի Ա. Հանրապետութեան դարբին՝ Արամ Մանուկեանին: Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան Երեւան գտնուող անդամները՝ Գրիգորիս Պողարեան, Միհրան Շիմշիրեան (Լիբանան), Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա), Վահրամ Գանիէլեան (Արեւելեան Մ.Նահանգներ), Արմէն Կէտիկեան (Գանատա), Գարրոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա), Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ․ Գառնիկ Մկրտիչեան եւ «Մարզիկ»ի խմբագիր եղբ․ Վիգէն Աւագեան այցելեցին Թոխմախիի գերեզմանատուն եւ յարգանքի ծաղիկներ զետեղեցին Արամ Մանուկեանի շիրիմին: Անոնք նաեւ ծաղիկներ զետեղեցին Հ.Յ.Դ. դեկավար գործիչ՝ Հրայր Մարուխեանի շիրիմին:



ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ



համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերու վեցերորդ օրը, 6 Օգոստոսի յետմիջօրէին, խաղերու 550 մասնակիցները՝ մարզիկներ, պատասխանատուներ, ծնողներ եւ բարեկամներ, այցելեցին Ծիծեռնակաբերդի յուշահամալիր եւ յարգանքի իրենց տուրքը մատուցեցին Հայկական Յեղասպանութեան նահատակներու յիշատակին:

Ծիծեռնակաբերդ հասնելով, լուռ եւ երկիւղած շարքերով, բոլորը տողանցեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական

Վարչութեան եւ մարզախաղերու կազմակերպիչ մարմնին առաջնորդութեամբ:

Յուշակոթողի մուտքին, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին կողմէ ծաղկեպսակ մը զետեղեցին Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրները: Ապա, բոլորը մէկական ծաղիկներ զետեղեցին անմար կրակին շուրջ, վայրկեան մը լուրջութեամբ յարգեցին նահատակներու յիշատակը եւ «Յառաջ նահատակ» քայլերգով հրաժեշտ տուին յուշահամալիրին:



**ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ**

Նոյն օրը, կէսօրին, մարզախաղերու մասնակից պատուիրակույթիւններու ներկայացուցիչները առանձին այցելութիւն մը տուին Հայկական Յեղասպանութեան թանգարան եւ ծանօթացան թանգարանի զանազան բաժիններուն:

Պատուիրակութեան մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, մարզախաղերու բարերարներ՝ եղբայրներ Ճորճ Տաքէսեան եւ Վարդան Գազանճեան, ինչպէս նաեւ՝ մարզական իւրաքանչիւր պատուիրակութեան մարզիկ մը եւ պատասխանատու մը:

Թանգարանին ծանօթանալէ ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամներն ու պատասխանատուները հիւրընկալուեցան թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի կողմէ, որ Հայկական մարզաշխարհի նախաեղեռնեան հանգրուանին մասին արժէքաւոր հրատարակութիւն մը կը պատրաստէ:

Դեմոյեան լայն տեղեկութիւններ տուաւ իր կատարած պըրպտումներուն մասին եւ շեշտեց, որ Թուրքիոյ մարզական կեանքը սկիզբ առած է հայերով: Միջազգային ողիմպիականներուն Թուրքիան ներկայացնող առաջին մարզիկները (1912) եղած են հայեր: Նոյնպէս, մարզական առաջին թերթը լոյս ընծայած են հայեր: Այս աշխատանքը, շարունակեց ան-, պիտի ջրէ թուրք մարզական պատմագիրներուն թէգերը եւ

երեւան պիտի հանէ Յեղասպանութեամբ այդ պատմութեան հասած հարուածը:

Յեղասպանութեան թանգարանին տնօրէնը բացայայտեց նաեւ ուշագրաւ կարգ մը տեղեկութիւններ ըսելով, թէ Հայաստան-Թուրքիա Ֆութպոլի խաղին, Սեպտեմբեր 2008ին, Թուրքիոյ Ֆութպոլի Ֆետերասիոնի փոխ նախագահը այցելած է... թանգարան՝ ներկայ գտնուելու 19րդ եւ 20րդ դարերու հայ մարզական կեանքին նուիրած ցուցահանդէսին: Դեմոյեան յայտնեց, որ Թուրքիոյ Ողիմպիական Կոմիտէն 2008ին դիմած է թանգարան՝ իր մարզական պատմութեան վերաբերող նկարներ ունենալու համար...:

Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը այս առիթով մեծապէս գնահատեց Հայկ Դեմոյեանի կատարած աշխատանքը եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց միութեան պատմական արխիւները ղնելու անոր տրամադրութեան տակ:

Հանդիպումին աւարտին, Դեմոյեան Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին նուիրեց Հայկական Յեղասպանութեան վերաբերող շարք մը հրատարակութիւններ եւ խոստացաւ անպայման այցելել միութեան թանգարանը, Պէյրութ, իր հրատարակութեան համար նիւթեր եւ նկարներ ապահովելու համար:



ՎԱՐԱԿԻՉ ՀՊԱՐՏՈՒԹԻՒՆ

(ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՏՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ)

Գրիգորիս Պողարեան
ՊԵՅՐՈՒԹ

Եթէ հարկ ըլլայ համա-Հ.Մ.Ը.-Մ.ական ծրոյ մարզախաղերը բնութագրել երկու բառով, լաւագոյն բնութագրումը պիտի ըլլայ՝ «վարակիչ հպարտութիւն»: Այո, «վարակիչ», բայց ո՛չ հիւժող կամ մաշեցնող, այլ՝ գօտեպնդող եւ առաւել կենդանացնող: «Հպարտութիւն», բայց ո՛չ գոռոզութիւն կամ ամբարտաւանութիւն, այլ՝ գիտակից եւ զուսպ ինքնաճանաչում:

Արդարեւ, կարելի՞ էր ականատես ըլլալ հայկական բանակի շեփորախումբին առաջնորդութեամբ դէպի «Հանրապետութեան» հրապարակ յառաջացող մարզիկներուն խրոխտ շարքերուն եւ հպարտ չզգալ: Ի՞նչպէս կարելի էր դիտել հրապարակը հաւաքուած խուռներամ հայրդիւնները եւ չհպարտանալ: Ի՞նչպէս չլուզուիլ եւ միաժամանակ հպարտութիւն չզգալ, երբ մարզադաշտերէն ներս կամ դուրս յաղթականն ու պարտեալը կարելի չէր զանազանել իրարմէ, որովհետեւ երկուքն ալ համակուած էին հայրենի հողին վրայ Հ.Մ.Ը.Մ.ավայել գիտակցութեամբ, իրենց վստահուած առաքելութիւնը լաւապէս կատարած ըլլալու գոհունակութեամբ: Հպարտառիթ իրադարձութիւններու շարքը կարելի է երկարել, սակայն կարեւորը անոնց սոսկական թուարկումը չէ, այլ՝ իրադարձութեանց ետին կանգնող ու անոնց մղիչ եւ կողմնորոշիչ ազդակներն են:

Իրողապէս, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ մարզախաղերուն առնչուած իւրաքանչիւր իրադարձութիւն իր մէջ կը խտացնէր աւելի քան 90ամեայ Հ.Մ.Ը.Մ.ական երթին ընթացքին ամբարտաւած հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը եւ առիթին պատշաճ փորձառութիւնը: Այսպէս, դաշտերու վրայ տիրող էր ազնիւ մրցակցութեան ոգին, դաշտերէ դուրս՝ եղբայրական սիրոյ եւ փոխադարձ յարգանքի ոգին, իսկ Ծիծեռնակաբերդի, Սարդարապարտի համալիրին թէ՛ եկեղեցիներու շրջափակերէն ներս՝ ականածանքի, ներաթափանց խորհրդաւորութեան եւ Առաքելական հաւատքի ոգին, եւ այս բոլորին առըն-



թեր՝ ամէնուրեք տիրական էր հպարտութեան զգացումը: Հպարտութիւն, գոր կարելի էր տեսնել իւրաքանչիւր մասնակիցի աչքերուն մէջ, թէկուզ աչքերը ըլլային յաղթանակի ուրախութիւնը ցոլացնող աչքեր, եւ կամ հազարամեակներու հաւատքի արտայայտիչներ թէ՛ Եղեռնի սարսափը դրսեւորող արտասուալից աչքեր:

Հիմա համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրոյ մարզախաղերը դարձած են անցեալ ու բռնած են պատմութեան ճամբան, սակայն անոնց վառած հպարտութեան ջահը, ի տարբերութիւն մարզախաղերը բնորոշող ջահէն, պիտի չչիջի, այլ վարակիչ հպարտութեամբ պիտի բոցավառէ հոգիները բոլոր այն Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք մասնակից եւ կամ պարզապէս ականատես եղան մարզախաղերուն:

Այո, հպարտութեան վարակիչ ջահը վա՛ն պիտի մնայ մինչեւ յաջորդ մարզախաղեր: Ի տեսութիւն:

«ԱԶԱՏ ՕՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ՎԱՀՐԱՄ ԴԱՆԻԷԼԵԱՆԻ ՀԵՏ

Անցեալ ծաբաթ օր, Երեւանի մէջ աւարտեցան համա-Շ.Մ.Ը.Մ.ական ծրագրի մարզախաղերը: Շ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին համար կարեւոր իրադարձում մըն էր այս կազմակերպումը, իր իւրայատուկ առաջնութեամբ, այն իմաստով, որ առաջին անգամ ըլլալով համա-Շ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը Հայաստանի մէջ տեղի ունեցան: Հայաստանէն Միացեալ Նահանգներ վերադարձի իր ձամբուն վրայ Աթէնք գտնուեցաւ եղբ. Վահրամ Դանիելեան, որ Շ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան իր պաշտօնին բերումով մասնակցեցաւ համա-Շ.Մ.Ը.Մ.ական խաղերուն: Այս առիթով հարցազրոյց մը ունեցանք իր հետ:

Հիմա որ աւարտեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի մարզախաղերուն կազմակերպումը, ի՞նչպէս կը գնահատէք այս իրադարձումը:

- Շատ մեծ գոհունակութիւն կը պատճառէ մեր բոլորին՝ հայրենի հողին վրայ իրադարձումը երկար ժամանակ արդէն ծրագրուող այս նախաձեռնութեան: Ինչպէս արդէն տեղեակ էք, համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի մարզախաղերը առաջին անգամ ըլլալով կազմակերպուեցան հայրենիքի մէջ, միութեան Պատգամաւորական Ժողովին որոշումով: Անցեալ տարուան Հոկտեմբերէն կազմուեցաւ կազմակերպիչ յանձնախումբը, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան հետ գործակցելով՝ ստանձնեց մարզախաղերու նախապատրաստական բոլոր աշխատանքները: Աջակցելի համագործակցութիւն տեղի ունեցաւ մեր բոլոր մարմիններուն միջեւ եւ փորձառու եղբայրներէ բաղկացած խումբերը մեծ յաջողութեամբ աւարտեցին իրենց պարտականութիւնը:

500է աւելի մասնակիցներու ներկայութիւնը հայաշխարհի տարբեր գոյութիւններէն գոհացուցիչ պատկեր մըն էր, մինչ իսկապէս աննախընթաց պէտք է նկատել խաղերու բացման հանդիսու-

թիւնը, որ տեղի ունեցաւ «Հանրապետութեան» հրապարակին վրայ, 35-40 հազար հայրենակիցներու ներկայութեամբ, երկրի քաղաքական, մշակութային եւ մարզական ներկայացուցիչներու ու արուեստագէտներու մասնակցութեամբ:

Կ'արժէ նշել մեր մասնաճիւղերու անդամներուն կողմէ տարուած սքանչելի գործը. անոնք նախապատրաստած էին մարզախաղերու լման ընթացքը, բայց մանաւանդ՝ բացման ելոյթին գերազանցեցին ամէն տեսակի սպասում, հոյակապ ու շքեղ հանդիսութիւն մը կազմակերպելով, որ վստահաբար երկար դրոշմուած պիտի մնայ բոլոր ներկաներու հոգիներուն մէջ:

Ի՞նչպէս էր Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղին ներկայութիւնը:

- Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ը հիմնականօրէն սկստական շարժումի վրայ ծանրացած է եւ մարզական խումբերու կամ մարզախաղերու կազմակերպման փորձառութիւն չունի, այսուհանդերձ ան մեծապէս գնահատելի գործ տարաւ, հասնելով ամէն ինչի:

Օգտագործուեցան տարբեր մարզադաշտեր («Վագգէն Սարգսեան», «Փիւնիկ», «Տինամօ» եւ այլն), լողի, ֆուտբոլի եւ պասքեթբոլի մրցումներուն համար:

Կարգապահութեամբ կատարուեցան փոխադրութիւնները, եւ առանց ուշացումներու ամէն ինչը կարգին տեղի ունեցաւ:

Հայաստանի պետական շրջանակները օգտակար գտնուեցա՞ն մրցումներու կազմակերպումին:

- Այո, բացառիկ էր համագործակցութեան մակարդակը:

Սփիւռքի նախարարուհի Հրանոյշ Յակոբեանի հետ երկու առիթով մեր ունեցած հանդիպումներուն ընթացքին արդէն քննարկուած էր համա-Հ.Մ.Ը.Մ.ական եւ համահայկական խաղերու գրեթէ նոյն ժամանակին կազմակերպելու հարցը եւ երկուստեք անպատեհութիւն չնկատուեցաւ համահայկական մարզական այս երկու ծրագիրներուն գծով, որոնք իրարու չխոչնդուեցին, այլ



օգնեցին, որպէսզի շատ մը խումբեր, որոնք համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերուն համար Հայաստանն ժամանեցին, երկարաձգեն իրենց կեցութիւնը՝ մասնակցելով նաեւ համահայկական խաղերուն:

Նաեւ առիթը ունեցանք բազմանդամ պատուիրակութեամբ մը այցելելու նախագահ Սերժ Սարգսեանին: Հանդիպումին նախագահը ընդարձակ զեկուցումով մը մեզ տեղեակ պահեց հայութեան դիմադրաւած հարցերուն շուրջ: Առիթը ունեցանք հարցումներ ուղղելու իրեն եւ պատասխաններ ստանալու: Նշեմ, որ նախագահը ողջունեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղերը Երեւանի մէջ կատարելու որոշումը եւ նկատել տուաւ, թէ որքան գերազանց նշանակութիւն ունի սփիւռքահայ երիտասարդութեան շփումը հայրենիքին հետ:

Մարզախաղերու ընթացքին ուրիշ ի՞նչ ծրագիրներ իրագործուեցան:

Բաւական խիստ էր մրցումներուն ժամանակացոյցը: Այսուհանդերձ, օգտակար եղաւ նաեւ զբօսաշրջական այցելութիւններու կարճ ծրագիր մը, որ գործադրուեցաւ այն օրերուն, երբ մրցում չկար: Այսպէս, տղաքը այցելեցին Սեւանայ լիճ, Երեւանի մէջ շրջագայեցան, Ծիծեռնակաբերդ բարձրացան, թանգարաններ այցելեցին եւ այլն: Ուրախութիւն կար, խանդավառութիւն կար, բոլորը բարձր տրամադրութեամբ կը մասնակցէին մարզական թէ՛ այլ ծրագիրներուն:

Նոյնիսկ վեթերաններու մասնակցութիւն կար շատ մը պատուիրակութիւններու մէջ, որոնք վարչական աշխատանքներով պարտաւորուած էին, բայց առիթը ունեցան նաեւ վերջին օրը վեթերաններու միջեւ շատ յաջող մրցում մը կատարելու:

Ձեր յառաջիկայ ծրագիրները որո՞նք են:

Վստահաբար, որ պիտի քննենք յառաջիկային մարզախաղերը Արցախի մէջ կազմակերպելու պարագան, ինչպէս էր արդէն Կեդրոնական Վարչութեան առաջին լրագումարին տուած որոշումը: Այսուհանդերձ, կարելի չեղաւ իրագործել այդ, Լ.Ղ.Հ.ի մէջ մարզադաշտերու եւ լողաւազաններու անյարմարութեան պատճառով: Յոյսով ենք, եւ մեր ջանքերը դէպի այդ ուղղութիւն պիտի կեդրոնացնենք, որպէսզի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ մարզախաղերու կազմակերպումը Արցախի մէջ կատարուի:

Ներկայիս կազմակերպչական ի՞նչ պատկեր կը ներկայացնէ Հ.Մ.Ը.Մ.ի կառույցը:

Վերջերս յաջողեցանք մեր մասնաճիւղերուն թիւը 100ի հասցնել, Մոսկուայի մէջ հիմնադրելով Հ.Մ.Ը.Մ.ի



100րդ մասնաճիւղը: 25 հազարէն աւելի անդամներ ունինք համաշխարհային առումով. մեծ է մեր փափաքը նոր շրջաններու մէջ եւս մարզական թէ՛ սկստակական շարժումներ ստեղծելու, իսկ Եւրոպայի նոր գաղութներուն մէջ եւս ջանք կը թափենք խումբեր կազմելու համար:

Հ.Մ.Ը.Մ.ը իր մարզական եւ սկստակական գործունէութեամբ մօտ է հայ ազգի երիտասարդ սերունդներուն: Այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ. իր աչքերը յառած է կազմակերպչական աշխատանքի, որպէսզի նոր սերունդներուն մօտ պահպանէ հայութեան արժէքները, ազգային առողջ դաստիարակութեամբ:

Դժբախտաբար կարելի չեղաւ Յունաստանի Հ.Մ.Ը.Մ.ի խումբերէն մասնակցութիւն ապահովել այս տարւան համա-Հ.Մ.Ը.Մ.ական մրցումներուն: Ուրիշ շրջաններ ալ կային որ չկարողացան մասնակցիլ:

Իսկապէս դժբախտութիւն էր, որ կարելի չեղաւ ապահովել Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի խումբերուն մասնակցութիւնը: Նորակազմ Մոսկուան ալ վերջին պահուն չկարողացաւ ներկայ գտնուիլ: Բայց հիմնականին մէջ շատ գոհացուցիչ էր մնացեալ մասնաճիւղերուն մասնակցութիւնը, նամանաւանդ նկատի առնելով մասնակիցներուն երիտասարդ տարիքը եւ անոնց խանդավառ ներկայութիւնը, որ օգնեց որպէսզի անոնք խորացնեն միջ-մասնաճիւղային եւ ներքին կազմակերպական մակարակները, եւ փորձառութիւն ձեռք ձգեն այսպիսի ծաւալուն ձեռնարկներու ընդմէջէն:

Նշեմ նաեւ, թէ ինչպէս ծանօթ է, այսպիսի համահայկական ծրագիրներ բազմածախս են եւ մեծ ջանքերու կը կարօտին: Մեր կազմակերպութիւնը իր հաւատարիմ նուիրատուներուն եւ օժանդակողներուն ներդրումով կարողացաւ այս անգամ ալ շքեղօրէն կազմակերպել համահայկական կարեւոր այս ձեռնարկը, որ չորս տարին անգամ մը կ'իրագործուի եւ իր աւանդը ունի մեր միութեան համար:

«Ազատ Օր», 13 Օգոստոս 2009

Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԱՐՇԱԲԸ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

(ԵՐԱԶԻ ՄԸ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՒՈՅԹՈՎ)



Գառնիկ Սկրտիչեան ՊԵՅՐՈՒԹ

1 Էն 8 Օգոստոս 2009, համա-Հ.Մ.Ը.Մ.ա-կան մարզախաղե-րը առաջին անգամ ըլլալով տեղի կ'ունենային Հայաս-

տանի մէջ:

Տարիներու երազ մըն էր, որ կ'իրականանար եւ ազ-դու պատասխան կու տար բոլոր թերահաւատներուն, թէ՛ Հ.Մ.Ը.Մ. ուր որ է, այնտեղ է բոլոր հայութիւնը, այնտեղ է ամբողջ Սփիւռքի հայաշունչ մթնոլորտը:

Հակառակ անոր որ Հայաստանի մեր միութենական կառույցը միայն սկաուտական ճիւղով կը գործէ, սակայն Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութիւնը եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ա-կան Տրդ մարզախաղերու յանձնախումբը միութենա-կան բարձր գիտակցութեամբ կարողացած էին ամէն իմաստով ճիշդ եւ անսխալ աշխատանք կազմակերպել:

Այս մասին վստահաբար պիտի կարդաք «Մարզիկ»ի էջերուն մէջ, սակայն անձնական տպաւորութիւններ կան, որոնց մասին կարելի չէ չգրել: Ի՛նչ ըսել այդ օրե-րուն մասին:

Չէք կրնար երեւակայել «Մարիթ» եւ «Քոնկրէս» պանդոկներուն վիճակը:

Չէք կրնար երեւակայել Երեւանի փողոցներուն վի-ճակը:

Չէք կրնար երեւակայել խաղերը հիւրընկալած դաշ-տերուն մթնոլորտը:

Բոլորը Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերով եւ եղբայրներով լե-ցուն, եռուն վիճակ: Պատմու-թիւն գիտցող մարդը եղածը ան-պայման պիտի նմանցնէր երբեմ-նի Հայէպի, Պէյրութի կամ այ-սօրուան Լոս Անճելըսի միջ-մաս-նաճիւղային Նաւասարդեան խա-ղերու մթնոլորտին, բան մը որ-մով Հ.Մ.Ը.Մ. փորձած էր ու կը փորձէ Հայաստան կազմել, Հայաստան տեսնել այդ բոլոր գաղութներուն մէջ, տասնամ-եակներէ ի վեր: Ահաւասիկ իրա-



կանացած էր մեր բոլորին երազը եւ մեր քոյրերն ու եղ-բայրները հայրենիքի հողին վրայ եկած էին Հ.Մ.Ը.Մ.ա-կան ոգիով իրարու դէմ մրցելով՝ յաղթական պահելու միայն ու միայն Հ.Մ.Ը.Մ.ը:

Կամքէ անկախ պատճառներով չկարողացայ ներկայ գտնուիլ բացման հանդիսութեան, բայց «ՀՆ»ի պաստա-ռէն յուզումով հետեւեցայ անոր: Յուզումով եւ ուրա-խութեամբ տեսայ երազի մը իրականացումը եւ յիշեցի այն բոլոր խօսքերը, գորս մեզմէ առաջ գործ ստանձնած ղեկավարները Սփիւռքի մարզադաշտերուն վրայ կրկնած էին, որ՝ «Տայ Աստուած, որ օր մը այս դրօշակ-ները (Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ը) ծածանին Հայաստանի հողին վրայ եւ մենք կարողանանք զանոնք սերունդէ սե-րունդ փոխանցելով՝ հասնիլ մեր մեծ երազին իրակա-նացման»:

Շատ տպաւորիչ բացման հանդիսութեանէն ետք՝ հե-տաքրքրական էր նաեւ փակման հանդիսութիւնը, որ կատարուեցաւ փակ մարզադաշտի մէջ, առանց շրջու-ցիչ լոյսերու եւ զարդարուն բեմի: Բայց եւ այնպէս, հան-դիսութիւնը իմ եւ վստահ եմ շատ մը այլ եղբայրներու յուզումը եւ ուրախութիւնը հասցուց իր գագաթնակէ-տին, ի տես երեւոյթի մը, որմով կարելի է միայն հպար-տանալ եւ ուրախանալ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը եւ կազմա-կերպիչ մարմինը գաղափարը յղացած էին մարզախաղե-րուն բաժակները անուանակոչել անունովը նուիրատու-ներու, որոնք իրենց նիւթական աջակցութեամբ զգալիօ-րէն թեթեւցուցած էին ձեռնարկին ծախսերը: Հոս էր որ տեսարանը հիացմունքով դիտեցի եւ սկսայ մանուկի մը նման հեկեկալ: Նուիրատուները ո՛չ առեւտրական ընկե-րութիւններ էին, ո՛չ ալ որեւէ ակնկալութիւն ունեցող-ներ, այլ՝ մեր հաւատաւոր ու վաս-տակաւոր եղբայրներն էին, որոնք բացի եղբ. Ճորճ Տաքէսեանէն, բա-նաւոր պատճառներով ներկայ չէ-ին, սակայն իրենց անունը բոլորին շրթներուն վրայ էր: Իրենք բոլո-րին մտքերուն եւ սրտերուն մէջն էին: Ֆիզիքապէս բացականքը եղբ. եւ քոյր Ժիրայր եւ Սրբուկ Սարգիսեաններն էին, եղբ. եւ քոյր Ատոմ եւ Սեյրա Թնճուկեանները: Շատ սիրելի ողբացեալ եղբ. Վա-

րուժան Գազանճեանի անուամբ բաժակը իր սղաքը՝ եղբայրներ Վարդանը եւ Հէրին նուիրած էին իրենց հօրը յիշատակին: Կարժէ առանձին յիշել եղբ. Հրաչ Սիսեռեանը, որ Կեղրոնական Վարչութեան անդամակցութեան բերումով խաղերուն ունեցած իր մեծ նպաստէն անկախ, փափաքած էր իր հօրը՝ ողբացեալ եղբ. Գեղամի եւ մօրը Ալիսի անունով բաժակ մը նուիրել:

Հոս էր ահաւասիկ գեղեցիկ պահը, երբ ներկայ թէ բացակայ նուիրատուներու կողմէ բաժակներու տուչութիւնը կատարեցին իրենց ներկայացուցիչները: Առաջին բաժակը, եղբ. Ժիրայր եւ քոյր Սրբուկ Սարգիսեաններուն կողմէ, յանձնեց իրենց զաւակը՝ եղբ. Զարեհ Սարգիսեանը: Երկրորդը, եղբ. Ասոմ եւ քոյր Սեյլա Թնճուկեաններուն կողմէ, յանձնեց իրենց զաւակը՝ եղբ. Յովհան Թնճուկեանը: Երրորդ բաժակը, եղբ. Գեղամ եւ քոյր Ալիս Սիսեռեաններունը, յանձնեց իրենց թոռնիկը՝ եղբ. Արամ Սիսեռեանը: Չորրորդը՝ եղբ. Վարուժան եւ քոյր Սոնա Գազանճեաններուն բաժակը յանձնեց իրենց զաւակը՝ եղբ. Վարդան Գազանճեանը, իսկ հինգերորդը՝

եղբ. Ճորճ Տաքէսեանը անձա՛մբ, հակառակ իր յառաջացեալ տարիքին, սակայն Հ.Մ.Ը.Մ.ական մարզու միշտ երիտասարդ ոգիով:

Այս երեւոյթն էր որ զիս մղեց այս տողերը գրելու եւ մեր նոր սերունդին փոխանցելու, որ Հ.Մ.Ը.Մ.ը ստեղծուած է ո՛չ փառքի, ո՛չ ալ ծափահարուելու համար, այլ՝ գոհողութեան գիտակցութեան վրայ, ըլլայ այդ նիւթական կամ բարոյական: Միշտ տեսնելու եւ գնահատելու անցեալը, ներկան եւ ապագան: Ինչպէս յաճախ կրկնած ենք, չկայ միութիւն մը, ուր երեք սերունդ իրարու եղբայր կ'ըսեն՝ մեծ հայրը, հայրը եւ թոռնիկը: Փակման հանդիսութեան օրը այս հաստատումը իր արտայայտութիւնը գտաւ իրապէ՛ս, ամէնէն գեղեցիկ ձեւով:

Վարձքը կատար բոլոր եղբայրներուն, անոնք ըլլան մեծ հայր, հայր թէ թոռնիկ: Քանի ունինք նման եղբայրներ, որոնք տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի դաստիարակութեամբ իրենց նիւթական եւ բարոյական աջակցութիւնը կը բերեն հաւաքական մեր երթին՝ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշաբարձը պիտի շարունակուի անվա՛խ ու հպարտ:

ԶՈՅԳ ԻՐԱԳԻՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՆՈՆՅՄԷ ՔԱՂՈՒԵԼԻՔ ԴԱՍԵՐ

Միհրան Շիմշիրեան
ՊԵՅՐՈՒԹ



1994 ին, իր հիմնադրութեան 75ամեակը նոր տօնակատարած, Զ.Մ.Ը.Մ. Հայաստանի մէջ կատարեց համա-Զ.Մ.Ը.Մ.ական իր առաջին բանակումը:

2009ին, այս անգամ իր 90ամեակը հազիւ տօնակատարած, Զ.Մ.Ը.Մ. Հայաստանի մէջ կատարեց համա-Զ.Մ.Ը.Մ.ական իր առաջին մարզախաղերը:

Պարզ զուգահիսուրի՛ն թէ նշանակալից տարեդարձներու առիթով յայտնուող իրականութիւն, որ կու գայ երեւան հասելու իսկական դիմագիծը Զ.Մ.Ը.Մ.ի, ուր հետեւողական եւ ժրաջան աշխատանքով մանուկներ, պատանիներ եւ երիտասարդներ կը թրծուին ազգային-միութեանական արժէքներով եւ այդ արժէքները տեղի՛ն կեանքի կը վերածեն գետնի վրայ կատարուած աշխատանքներով:

Համա-Զ.Մ.Ը.Մ.ական զոյգ նախաձեռնութիւններու իրականացումները 1994ին եւ 2009ին, անկասկած, կարելոր դուռ մը բացին Հայաստան-Սփիւռք գործակցութեան մէջ եւ բոլորին յստակ դարձուցին, որ Զ.Մ.Ը.Մ. եւ իրեն նման այլ միութիւններ *ընելիք* եւ *ըսելիք* ունին այդ գործակցութեան զարգացման մէջ: Բան մը, զոր հարկ է նկատի ունենան նորաստեղծ Սփիւռքի նախարարութեան պատասխանատուները իրենց յառաջիկայ ծրագրումներուն եւ քայլերուն մէջ, փոխանակ իրենց գրաւը դնելու Սփիւռքէն ինքնակոչ անհատներու եւ տնտեսապէս յաջողած գործարարներու վրայ, որոնք ժողովրդային եւ միութեանական յենարաններէ զուրկ ըլլալով՝ դժուար թէ կարենան արդարացնել իրենց վրայ դրուած յոյսերը: Ապացոյցը մէջտեղն է, համահայկական խաղերու պարզած տխուր վիճակն է:

Արդ, մեր սպասումն է, որ հայրենի պատասխանատուներ յիշեալ փորձառութիւններէն դասեր քաղելով՝ այսուհետեւ աւելի քաջալերեն Սփիւռքի կազմակերպ միութիւնները եւ մօտէն հոգան անոնց կարիքները եւ ոչ թէ միակողմանի կերպով օգտագործեն անոնց կարողութիւնները, մինչեւ որ անոնք սպառնա եւ օրին մէկն ալ ուժաքամ դառնան:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ. ՄԻՋՈՑԱՌՈՒՄ, ՈՐԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է ԻՄԱՍՏԸ

Գազիկ Բեգլարեան
ԵՐԵՎԱՆ, «ՄՊՈՐՏ» ԹԵՐԹ, 21 ՕԳՈՍՏ. 2009

Թիւն թողեցին, եւ այն տեսակէտն է գերիշխողը, որ իմաստ չունի չորս տարին մէկ կազմակերպուող համահայկական խաղերից բացի, նաեւ միջանկեալ՝ երկու տարին մէկ անգամ, համահայկական խաղերի ծրագրով մրցումներ անցկացնել պատճառով եւ ֆուլթայլից եւ Վերջին մարզաձեւից այդպիսի փորձ առաջին անգամ էր կատարուում: Ընդ որում, եթէ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերի կազմակերպիչները հնարաւորն արել էին, որ ամէն բան անկաշկանդ լինի, միջոցառումը համընդհանուր տօնի վերածուի, ապա համահայկական խաղերի կազմակերպիչները նոյնիսկ չէին ցանկացել, որ քիչ թէ շատ շուքով բացում լինի:

Մինչդեռ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերի բացումը իւրօրինակ էր, տպաւորիչ: Մասնակիցները մեկնարկեցին մայրաքաղաքի Հիւսիսային պողոտայից եւ իրենց երթն աւարտեցին «Հանրապետութեան» հրապարակում: Այստեղ էլ կազմակերպուեց շքեղ համերգ, հայկական յայտնի երգիչների մասնակցութեամբ, որը համընդհանուր ողբերգութիւն առաջացրեց: Փակումն էլ անցաւ մայրաքաղաքի «Տինամօ» մարզասրահում: Եւ յուշագաւաթներ, պարգեւներ ստացան մեծ թուով մասնակիցներ:

Ի դէպ, այդ միջոցառման ժամանակ Հայաստանի սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութիւնից ներկայ չէր ո՛չ նախարարը, ո՛չ էլ նրա տեղակալներից որեւէ մէկը: Ամենանշանաւոր դէմքն ողիմպիական խաղերի չեմպիոն, Հայաստանի Ազգային Ողիմպիական Կոմիտէի փոխ նախագահ Օզաէն Միրզոյեանն էր, որը եկել էր Հ.Ա.Օ.Կ.ի գաւաթը յանձնելու ամէնից շատ պարգեւների արժանացած պատուիրակութեանը եւ հեռանալու: Ընդ որում, ոստիկանները, նրան չճանաչելով, ցանկանում էին հեռացնել դահլիճից:

Դժուար է ասել, թէ այդ ամէնն ինչով կ'աւարտուէր, եթէ չմիջամբտէր ոստիկանների վերադասը՝ բռնցքամարտի Խ.Ս.Հ.Մ. ժողովուրդների սպարտակիրադայի չեմպիոն, միջազգային կարգի սպորտի վարպետ Աշոտ Աւետիսեանը: Միրզոյեանը կատակեց, թէ այդ ամէնն իր գլխին Աւետիսեանն է սարքել: Այսուհանդերձ, նա գաւաթը յանձնեց Արեւմտեան Միացեալ Նահանգների պատուիրակութեանը, որի կազ-



Եթէ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերի կազմակերպիչները հնարաւորն արել էին, որ միջոցառումը տօնի վերածուի, ապա համահայկական խաղերի կազմակերպիչները նոյնիսկ չէին ցանկացել, որ քիչ թէ շատ շուքով բացում լինի:

Օգոստոսի սկզբին Հայաստանում իրար յաջորդեցին Հ.Մ.Ը.Մ.ի (1-8ր) եւ համահայկական խաղերը (9-16ր), որոնց պատճառով եւ ֆուլթայլի մրցաշարերն իրենց մակարդակով իրարից գրեթէ չէին տարբերուում: Առանձնայատկութիւնը թերեւս այն էր, որ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերի բոլոր ծախսերը հոգացել էր այդ կազմակերպութիւնը, իսկ համահայկական խաղերի համար մեր պետութիւնը զգալի միջոցներ էր առանձնացրել:

Հ.Մ.Ը.Մ.ի խաղերը, որոնք տարբեր երկրներում կազմակերպուում են 1981ից սկսած, Հայաստանում առաջին անգամ էին անցկացուում, եւ շատերի մօտ տպաւորութիւնն այն էր, որ Սփիւռքում բնակուող հայ երիտասարդների համար հայրենիքի հետ կապը սերտացնելու հարցում դա հիանալի միջոցառում է, եւ որոշուեց յաջորդ խաղերը չորս տարի յետոյ կրկին անցկացնել Հայաստանում կամ Արցախում:

Իսկ համահայկական խաղերը տօգոյն տպաւորու-



մուս 70 մարդ էր:

Մինչդեռ, համահայկական խաղերը փայլից գուրկ էին: Հ.Հ. սպորտի եւ երիտասարդութեան հարցերի նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեաներն էլ անտարբեր էին: Ի դէպ, մրցումների օրերին նրանց մրցավայրերում գրեթէ չտեսանք: Խաղերին գալիս էր միայն փոխ նախարար Խաչիկ Ասրեանը: Ի դէպ, նրա գալուց անմիջապէս յետոյ պաշտօնեայի ժամանած մրցավայրում էին պատահաբար յայտնուում տարբեր հեռուստաընկերութիւնների ներկայացուցիչները: Իսկ կարճատեւ նկարահանումից յետոյ մրցավայրում ոչ փոխ նախարարին, ոչ էլ որեւէ հեռուստատեսային լրագրողի կամ օպերատորի գտնել չէր կարելի:

Ուշագրաւ էր նաեւ այն փաստը, որ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերի ծրագրով պասքեթպոլիստուհիների մրցաշարին մասնակցում էր 5 թիմ: Եւ առաջին երեք տեղերը գրաւեցին արտասահմանեան երկրների հաւաքականները: Համահայկական խաղերի ծրագրով պասքեթպոլիստուհիների մրցումներում եւս պայքարի ոլորտ էր ներգրաւուել հինգ թիմ, որոնցից միայն մէկ թիմն էր արտասահմանեան: Մրցասպարէզ էր դուրս եկել Թեհրանի հաւաքականը [որ Յայաստան ժամանած էր համա-Յ.Ս.Ը.Մ.ական մարզախաղերուն մասնակցելու համար-«Մ.»]: Իսկ մասնակից միւս հաւաքականները ներկայացնում էին Երեւանը, Գիւմրին, Սիւխանը եւ Ստեփանակերտը:

Կարգ է սահմանուած, որ եթէ համահայկական խաղերի ծրագրում որեւէ մարզաձեւ է ընդգրկուում, ապա առնուազն 8 քաղաքի հաւաքականի մասնակցութեան յայտ պէտք է լինի: Այդ է պատճառը, որ մի շարք մար-

զաձեւեր այդպէս էլ չեն մտցուում համահայկական խաղերի ծրագրում: Իսկ ինչո՞ւ պասքեթպոլիստուհիների նկատմամբ այս հարցում թողտուութիւն եղաւ, դժուար է ասել: Հաւանաբար անեղանելի վիճակից էր: Ի դէպ, չի կարելի ասել, որ այդ ամէնն անսպասելի էր:

Բանն այն է, որ խաղերից դեռ շատ առաջ մի քանի անգամ փոխուել էր մասնակիցների յայտաւորման ժամկէտը՝ արձագանգներ չլինելու պատճառով: Եւ վիճակահանութիւնը շատ ուշ անցկացուեց՝ խաղերի մեկնարկից անմիջապէս առաջ: Դրանից յետոյ էլ Թաւրիզի ներկայացուցիչները՝ պասքեթպոլի տղամարդկանց եւ կանանց թիմերը, թքած ունենալով ամէն բանի վրայ, չներկայացան մրցավայր: Սակայն կազմակերպիչների հոգսերը դրանով չաւարտուեցին: Վիճակահանութիւնից յետոյ էլ անհիմն պատճառաբանութիւններով փոխուեցին պասքեթպոլի եւ Ֆութպոլի երկու մրցավայրերը:

Խաղերը սպասարկող արտասահմանցի մրցավարներն էլ դժգոհ էին: Նրանք տրտնջում էին, որ Հ.Մ.Ը.Մ.ի խաղերը վարելու համար օրական իրենք ստացել են շուրջ 30 տոլար [11 հազար դրամ-«Մ.], մինչդեռ համահայկական խաղերին օրական տրամադրում են ընդամէնը 2 հազար դրամ: Այս հարցը փորձեցին կարգաւորել, եւ նրանց օրական աշխատավարձը եւս 3 հազարով աւելացեց, սակայն դրանից նստուածքը չվերացաւ:

Մարդիկ դժգոհ էին նաեւ Երեւանյան թանկ ապրուստից: Իսկ համահայկական խաղերի մասնակիցները Հայաստան են գալիս եւ հանդէս են գալիս հանգանակած միջոցներով:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԱԽԱՂԵՐԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սեւակ Յակոբեան
«ԵՐԿԻՐ», 25 ՕԳՈՍՏՈՍ 2009

90 ամեայ պատմութիւն ունեցող Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը (Հ.Մ.Ը.Մ.) իւրաքանչիւր չորս տարին մէկ կազմակերպում է համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզական խաղեր, որին մասնակցում են հարիւրաւոր մարզիկներ աշխարհի տարբեր երկրներից:

Այս տարի հերթական խաղերն էին, որի կապակցութեամբ Հայաստան էին ժամանել աշխարհի 15 երկրներից շուրջ 500 սկաուտներ⁽¹⁾: Հայկական ամենախոշոր սկաուտական կազմակերպութիւնը Հայաստանում իր մասնաճիւղը բացեց Խորհրդային Միութեան փլուզումից անմիջապէս յետոյ⁽²⁾, իսկ խաղերը Հայաստանում առաջին անգամ են կազմակերպուում:

Նախորդները տեղի են ունեցել միութեան մասնաճիւղ ունեցող երկրներից մի քանիսում՝ Ա.Մ.Ն., Գանատա, Ֆրանսիա, Լիբանան, Յունաստան: Լող, սեղանի

թենիս, պասքեթպոլ, ֆութպոլ, շախմատ. այս մարզաձեւերում Օգոստոսի 2-8ը մարզիկները մրցեցին Երեւանի մարզադաշտերում: 1ին, 2րդ, 3րդ տեղի յաղթողները պարգեւատրուեցին մետալներով եւ ստացան ողիմպիական փոխանցիկ գաւաթը:

Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ.ի այս միջոցառումը զուտ մարզական մրցոյթ չէ, Հ.Մ.Ը.Մ.ի բուն նպատակը Հայաստանին Սփիւռքի շողկապումն է, իսկ խաղերը սոսկ միջոց են ծրագիրն իրականացնելու համար:

Սփիւռքեան գաղթօճախներում երեխաները սովորում են հայոց պատմութիւնը, ծանօթանում են Հայաստանին եւ նրա անուանի գործիչներին, մշակութային կոթողներին, հայրենիքի առօրեային տեղեկանում հաղորդումներից ու Հայաստան այցելողներից, բայց բոլորովին այլ է, երբ նրանք անձամբ են այցելում Հայաստան:

Եգիպտոսից, Ամերիկայից, Պուլղարիայից, Երուսաղէմից, Լիբանանից, Անգլիայից, Գանատայից, Հարաւային Ամերիկայից, Սիւրիայից, Ֆրանսիայից, Պարսկաստանից եւ այլ երկրներից ժամանած սկաուտներից⁽³⁾ շատերը Հայաստանում էին առաջին անգամ, եւ Հ.Մ.Ը.Մ.ի ան-

դամները համոզուած են, որ այս այցելութիւնը անջնջելի տպաւորութիւններ է դրոշմելու նրանց սրտերում: Բացի մրցումներից, երիտասարդները մասնակցեցին Հայ Դատի թեմայով դասախօսութիւնների, այցելեցին Սեւանայ լիճ եւ Ծիծեռնակաբերդ:

Հիմնադրաման օրից սկսած, Հ.Մ.Ը.Մ.ը նպատակ է ունեցել նախ եւ առաջ միաւորել հայ երիտասարդներին, հայեցի դաստիարակել, ազգային, գաղափարական գիտակցութիւնը զարգացնել երիտասարդների մէջ, որ Սփիւռքի երիտասարդն իմանայ՝ ինքը պահանջներ ունի, որոնք պէտք է իրականացնել: Խաղերի նպատակը հայ երիտասարդութեանը իրար մօտեցնելն է, որ լաւ տպաւորութիւններով գնան եւ իրենց ստացած ազգային դաստիարակութիւնը ընկերներին փոխանցեն՝ նպաստելով հայապահպանմանը:

Այս նպատակով Հայաստանում կազմակերպուում են նաեւ բանակումներ: Յաղթող-պարտուող՝ այս ամէնը երկրորդական են, հիմնական արժէքը շփումն է: Այս կերպ հայ երիտասարդները միմիանց հետ ծանօթանում են, մրցում, տեսնելով իրենց հայրենիքը՝ զօրացած մեկնում իրենց բնակավայրերը, - ասում է Հ.Մ.Ը.Մ.ի Կենտրոնական Վարչութեան անդամ Յովսէփ Շիմշիրեանը⁽⁴⁾:

Հ. Շիմշիրեանը⁽⁵⁾ նաեւ անդրադառնում է հայրենիք-Սփիւռք բազմապիսի կապերին ու Հայոց Յեղասպանութեան թեմային՝ նշելով, որ սփիւռքահայ երիտասարդի համար Յեղասպանութեան խնդիրը հիմնական պահանջ է, եւ այս հարցում Հայաստանի Հանրապետութեան կողմից որեւէ ընկրկում ողջ սփիւռքահայութեանը հասցնում է յուսալքութեան:

Պէշրութում լոյս տեսնող հայերէն լեզուով սփիւռքեան միակ մարզական ամսաթերթ, Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօ-

նաթերթ, «Մարզիկ»ի խմբագիր Վիգէն Աւագեանն էլ ցաւով նշում է, որ Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները կարծես մակերեսային բնոյթ են կրում, հաւաքներից, սեմինարներից ու բանաձեւերից այն կողմ չեն անցնում: Համահայկական խաղեր, համահայկական խորհրդաժողով, պիզնէսմէնների համահայկական հանդիպում, իրաւաբանների հանդիպում, ճարտարապետների հանդիպում եւ այլազան մակարդակներով միջոցառումներ, ու միայն այդքանը:

Նիւթական ակնկալութիւնից զատ, պէտք է Սփիւռք-հայրենիք կապերը ջերմ բնոյթ ունենան, որովհետեւ սփիւռքահայ օճախները ոչ միայն նիւթական, այլեւ բարոյական շնչի կարիք ունեն, հայրենիքի շնչի ու ազդակներ: Մենք տարբեր երկրներում ենք բնակւում, եւ տարբեր է մեր ապրելակերպը, բայց պէտք է հասկանանք իրար:

Սփիւռքի երիտասարդներին հայրենիքին միաւորելու համար իրականացւում են տարբեր ձեռնարկներ, իւրաքանչիւր տարի Հայաստան են գալիս բազմաթիւ սփիւռքահայ երիտասարդներ: Վստահ ենք, որ այս այցելութիւնների արդիւնքում եթէ ոչ բոլորը, ապա Սփիւռքի երիտասարդների գոնէ մի մասը անպայման հայապահպանական հարուստ լիցքերով է վերադառնալու, նման մարզական, մշակութային եւ այլ միջոցառումները օգնելու են, որ Սփիւռքը վերջնականապէս չձուլուի եւ մայրամուտ չապրի Սփիւռքում հայկականութիւնը:

«ՍԱՐՁԻԿ»Ի ՃՇՂՈՒՄՆԵՐ

- 1) Մարզիկներ:
- 2) Անմիջապէս առաջ՝ 1989ին:
- 3) Մարզիկներէն:
- 4) Միիրան Շիմշիրեան:
- 5) Նոյնը:

ՃԱՄԲԱՅ ԲԱՅԷ՛Ք

Պատմութիւն կերտեցին անոնք, աշխարհի չորս ծագերէն ժամանած Գ.Ս.Ը.Մ.ականները:

Տարիներ առաջ միայն անիրագործելի երազ, այդ օր...Օգոստոս 1, 2009ին իրականացած ու իրագործուած էր այդ երանի՛ն:

Այդ օր, տողանցքի պահուն եւ բացման հանդիսութեան, ամէն մէկ Գ.Ս.Ը.Մ.ականի մէջ կը տիրապետէր գոհունակութիւնը, երախտապարտութիւնն ու արժանապատուութիւնը: Կը ծածանէին եռագոյնն ու Գ.Ս.Ը.Մ.ի դրօշը, բերկրանք, արցունք եւ հաւատք իրարու խառնելով եւ ետին ձգելով տասնեակ մը այլ երկիրներու դրօշակներ, որոնք կը ներկայացնէին բազմաթիւ մասնաճիւղեր:

Մանուկ, պատանի, երիտասարդ, ալեհեր, Գ.Ս.Ը.Մ.ականը քալեց որոտընդոստ ծափողջոյններու տակ: Ապագայի երազ մը կը պատահէր ներկայ կշռոյթին, ինքնին պատմութիւն մը կերտելով, անկիւնադարձային ապառնիի մը ոսկի էջերը պատրաստելով:

Աւելի քան իր ինստուամեայ յարաճուն գործունէութեամբ եւ ծառայութեամբ, հայոց գաղթաշխարհի զանազան օճախներէն ներս իր աշխատանքը ամենայն հետեւողականութեամբ կատարելու կողքին, այս անգամ Գ.Ս.Ը.Մ. իր առաջնորդ մեծութիւնը տրամադրած էր մայր հայրենիքին:

Հաւանաբար քանի մը վայրկեաններու, կամ աւելի ծիշդ, ականթարթային տեւողութիւն ունէր անոնց կատարած տողանցքը...եթէ վայրկեան մը բաղդատենք անոնց ստեղծած մթնոլորտին ընդմէջէն տողանցող դարաշրջանները, յաղթանակներն ու սխրանքները:

Հպարտ ու խրոխտ Գ.Ս.Ը.Մ.ականը տողանցեց, ներկայ բազմութեան ցոյց տալով, թէ խոր գիտակցութիւն ունի անմեծ ժողովուրդի մը կամքը ներկայացնելու:

Ապրող ժողովուրդի մը դարաւոր ուխտն էր որ կ'ողջունուէր:

Եւ այդպէս ալ պիտի ընթանայ, ինչ որ ալ ըլլան պայմաններն ու ժամանակը, Գ.Ս.Ը.Մ.ը պիտի շարունակէ իր աւանդն ու փառքը...ճամբայ բացէ՛ք:

«Հայրենիք», 7 Օգոստոս 2009

Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՒ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆԸ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ԳԱՌՆԻԿ ՄԿՐՏԻՉԵԱՆԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ՝ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՄԱՄՆԱԿԻՑ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ, 6 ՕԳՈՍՏՈՍ 2009ԻՆ)

Միրելի Հ.Մ.Ը.Մ.ա-կաններ,

Սփիւռքի գաղութներէն ժամանած շատ սիրելի միութենական մարզիկ-մարզիկուհիներ,

Դուք ծանօթ էք Հ.Մ.Ը.Մ. բառին, առանց թափանցելու անոր խորքային իմաստին:

Հ.Մ.Ը.Մ.:

Չորս գիրեր, որոնք խանդավառութեան ախիբներ կը բարձրացնեն ընդհանրապէս հայ ժողովուրդին եւ յատկապէս պատանիներուն ու երիտասարդներուն մօտ:

Չորս կախարդական գիրեր, որոնք յիշատակ, յուզում կը պատճառեն բոլոր անոնց, որոնք անցան անոր շարքերէն, իբրեւ սկառուտ կամ մարզիկ: Գիրեր՝ որոնք կը նշանակեն գայլիկի երգ ու կանչ, արշաւ ու բանակում, աշխատանք եւ խարուկահանդէս, մարզական խումբ եւ մրցում, յաղթանակ եւ պարտութիւն, շքեղ տողանցք:

Ու տակաւին, ժողով ու անհատնում ժողով:



Եղբ. Գառնիկ Սկրտիչեան:

Այս բոլորն է Հ.Մ.Ը.Մ.ը:

«Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանի պատմութիւն:

Հաւատք եւ յոյս հայութեան, հայկականութեան ամուր խարսխ, պատնէշ ու վճռակամ երթ դէպի լինելութիւն: Անսասան շքերթ դէպի յաղթանակ: Այս է Հ.Մ.Ը.Մ.ը, եւ կ'արժէ աւելի մօտէն եւ խորապէս ծանօթանալ այս մեծ կազմակերպութեան, գիտնալ թէ ի՞նչու խումբ առ խումբ կու գանք խտացնել Հ.Մ.Ը.Մ.ի շարքերը, իբրեւ սկառուտ, մարզիկ կամ անդամ: Ի՞նչ կը սպասենք Հ.Մ.Ը.Մ.էն, Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը ի՞նչ ձեւով ունինք եւ, վերջապէս, ի՞նչ ձեւով եւ մտայնութեամբ պէտք է գործենք Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ պատասխանատուութիւն ստանձնած Հ.Մ.Ը.Մ.ականներս:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՊԱՆՅԻԿ ԱԿՆԱՐԿ

Հ.Մ.Ը.Մ. հիմնուեցաւ Պոլսոյ մէջ, 1918 Նոյեմբերին:

Սակայն, այդ թուականէն առաջ արդէն մարզական, յատկապէս ֆուտպոլի խումբեր եւ ակումբներ կը գործէին Պոլսոյ եւ անոր արուարձաններուն մէջ:

Այս ժամանակաշրջանին կը հանդիպինք երկու անուններու, որոնք մարզանքէն եւ ֆուտպոլէն աւելի հեռու կը տեսնէին եւ կը ծրագրէին կազմակերպել երիտասարդութիւնը: Այդ անուններն էին Շաւարշ Քրիսեան եւ Գրիգոր Յակոբեան:

Շաւարշ Քրիսեան 1911 ֆետրուարին, քաջալերանքովը Գրիգոր Յակոբ-



Դասախօսութեան հետեւող պատասխանատուներ:

եանի, լոյս կ'ընծայէ հայ մարզական առաջին թերթը՝ «Մարմնամարզ»ը, որուն ազդեցութիւնը մեծ կ'ըլլայ դպրոցներուն եւ երիտասարդութեան մօտ՝ կազմակերպելով սկաուտութիւնը եւ մարզական կեանքը: «Մարմնամարզ»ի գլխաւոր նպատակն էր պատրաստել, կրթել հայ երիտասարդը Ֆիզիքայէս եւ մարմնապէս, այլ մանաւանդ՝ միակ կազմակերպութեան մը մէջ համախմբել մարզական, սկաուտական երկրորդական եւ երրորդական խումբերը:



Եւ այսպէս, 1911 Մայիս 1ին կը կազմակերպուին միջ-ակմբային առաջին խաղերը, որոնք մեծ անդրադարձ կ'ունենան պոլսահայ կեանքէն ներս: Այդ թուականներուն մարմին կ'առնէ նաեւ հայ սկաուտութիւնը, յատկապէս վարժարաններէ ներս: Այս շարժումին գլխաւոր քաջալերողը կը հանդիսանայ մանավարժ եւ տնօրէն Յովհաննէս Հինդլեան:

Այս խանդավառութիւնը կը տարածուի ամէն կողմ, մինչեւ գաւառները, ուր կը կազմուին սկաուտական եւ մարզական խումբեր:

1914ի պատերազմը կը կասեցնէ թափը: Շաւարշ Բրիսեան կը նահատակուի, զոհ երթալով Ապրիլեան Եղեռնին:

Պատերազմէն ետք, ի տես յուսահատ, վիրաւոր որբերու բազմութիւններուն եւ անպատսպար երիտասարդներուն, Գրիգոր Յակոբեան եւ ընկերները՝ Խոյեան եւ ուրիշներ, նախաձեռնողը կ'ըլլան հիմնելու մարզական եւ սկաուտական միացեալ միութիւն մը, ու 1918ին հիմը կը դնեն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ին, իրագործելով Շաւարշ Բրիսեանի գաղափարը:

Ծանօթ է արդէն, թէ Հ.Մ.Ը.Մ. ինչ տարածում եւ գործունէութիւն ունեցաւ մինչեւ գաւառները: Հ.Մ.Ը.Մ.ի համբաւը հասաւ մինչեւ նորաստեղծ Հայաստան, որուն կառավարութեան հրահրով Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչները մեկնեցան հայրենիք՝ հոն եւս կազմակերպելու համար սկաուտութիւնը եւ զարկ տալու մարզական կեանքին:

Թուրքիոյ քաղաքական դէպքերը ստիպեցին, որ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 1922 Սեպտեմբեր 16ին գումարէ իր վերջին նիստը եւ Հ.Մ.Ը.Մ.ը լուծած հռչակէ Թուրքիոյ մէջ:

Այսպէսով կը փակուէր Հ.Մ.Ը.Մ.ի Պոլսոյ հնոցը, սակայն երբեք պիտի չմարէր Հ.Մ.Ը.Մ.ի բոցը: Հնոցին առկայծումները գաղթական հայութեան հետ պիտի փոխադրուէին արտասահման, գաղութէ գաղութ, եւ նոր Հ.Մ.Ը.Մ.ներ պիտի հիմնուէին քիչ մը ամէն տեղ, վառ պահելու համար Պոլսոյ մէջ հիմնուած Հ.Մ.Ը.Մ.ի կրակը եւ իրագործելու անոր ազգանուէր նպատակները եւ իտէպը:

Հետագային ետ վերադառնալու համար հայրենիք,

ուր այսօր ան կը գործէ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ. անունով :

ԻՆՉՈ՞Ւ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Կ'ԸԼԼԱՆՔ

Գայլիկը կամ արծուիկը երբ ծնողքին ձեռքը բռնած վտիտ քայլերով կ'առաջնորդուի դէպի ակումբ՝ մաս կազմելու վոհմակի մը, անշուշտ չի գիտեր թէ ո՞ւր կ'երթայ, ինչո՞ւ կ'երթայ: Սակայն, անմիջապէս ան կը սիրէ ակումբը, տարագը, ընկերները, խաղերը: Կամաց-կամաց կը սորվի նոր բաներ, կը վարժուի ապրիլ նուիրապետական կարգերու մէջ, կը սորվի յարգել, հնազանդիլ, ապա՝ հրահանգ տալ, պարտականութիւն ստանձնել, կը պատրաստուի ընկերութեան ներս մտնելու՝ հաստատ քայլերով, ինքնավստահ: Այսպէս, ան կը սորվի, կը դաստիարակուի սկաուտութեան շրջանին: Կը զգայ, հետզհետէ, որ ինք տարբեր է իր պատրաստութեամբ, իր գործնական միջոցներու գիտելիքներով, ֆիզիքական եւ բարոյական կազմաւորումով: Ու երբ երէց է՝ կը դառնայ աւելի գիտակից, աւելի ծանօթ ազգային հարցերու ու կը զգայ, որ ունի պարտաւորութիւններ եւ յանձնառութիւններ: Այս բոլորը կը կատարուին բնական ձեւով, տարիներու ընթացքին, կարգապահութեամբ, խաղով, արշաւով, բանակումով, ընկերական, եղբայրական առողջ եւ շինիչ միջնորդութիւն մէջ:

Ծնողքը մեծ գոհողութեամբ եւ ուրախութեամբ կը հետեւի իր փոքրիկին քայլերուն ու կը զգայ Հ.Մ.Ը.Մ.ի դերը: Հ.Մ.Ը.Մ. դրոշմուած կը մնայ սկաուտական շարքերէն նոյնիսկ կարճ ժամանակի մը համար անցած պատանիներու հոգիներուն մէջ:

Նոյնն է պարագան մարզիկներուն:

Մարզախաղը, սփորը քաշողական է երիտասարդներուն համար:

Պետութիւններ յատուկ ուշադրութիւն կը դարձնեն իրենց երիտասարդութեան պատրաստութեան՝ սփորի միջոցով, կը տրամադրեն մեծագումար պիւտճէներ, կը յառաջացնեն նախարարութիւններ: Սփորը կը պատրաստէ առողջ նկարագրի տէր, մաքուր երիտասարդութիւն: Մարզական մրցակցութիւնը, մրցանիշ կտրելու,

յաղթելու, ինքզինք բարելավելու ճիգը կը դրժէ կամքը, կ'ամրացնէ դժուարութիւնները յաղթահարելու ոգին, կու տայ յաղթանակի խանդավառութիւնը, կեանքը առանց ճնշուածութեան, ազատօրէն ապրելու հոգեկան պատրաստութիւնը:

Մեր ժողովուրդին համար շատ կենսական է մարզանքը եւ մարզախաղը՝ այլ խօսքով սփորը, որուն հայերէն ճշգրիտ բառը իր ամբողջական իմաստով դժուար է գտնել:

Այս պատճառով է որ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները մեծ կարեւորութիւն ընծայեցին անոր: Պայքար տարին թերթով, դասախօսութիւններով, որպէսզի սփորը կիրարկուի, ներմուծուի դպրոցներէն ներս, որպէսզի իգական սեռն ալ հետեւի սփորին: Ամբողջական են սփորին բարերար ազդեցութիւնները ու Հ.Մ.Ը.Մ. ներկայիս ալ ամէն տեղ ուժ կու տայ սփորին, անշուշտ առանց ունենալու նիւթական մեծ միջոցներ:

Մարզական իր կեանքով, մարզական խումբի մը մաս կազմելով, Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը կը պատրաստուի ֆիզիքապէս, հոգեպէս եւ բարոյապէս, ընկերային առողջ միջնորդութի մէջ:

Սկստուածութիւնը եւ մարզական կեանքը, ահա՛ Հ.Մ.Ը.Մ.ի գոյգ թեւերը, որոնցմով կը բարձրանայ Հ.Մ.Ը.Մ.ական սկստը եւ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկը, կը բարձրանայ, բարձրացնելու համար իր շրջապատը, իր ժողովուրդը:

Սկստուածութիւնը եւ սփորը, Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ, կը թրծեն հայ պատանին եւ հայ երիտասարդը: Անոնց կու տան Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը ամուր պէտք է ըլլայ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մօտ,



ըլլայ ան սկստու, մարզիկ, պատասխանատու կամ պարզ անդամ:

Այս գիտակցութիւնն է, որ կը զօրացնէ Հ.Մ.Ը.Մ.ը, զայն աւելի կազմակերպող, աշխոյժ եւ գործօն կը դարձնէ:

Պատկանելիութեան գիտակցութիւն կը նշանակէ գիտնալ, թէ ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ.ական ենք, ի՞նչ ստանալու եկած ենք Հ.Մ.Ը.Մ.էն, իբրեւ սկստու եւ մարզիկ, եւ ի՞նչ տալու եկած ենք մեր միութեան, մեր կազմակերպութեան, որպէսզի ան կարողանայ միշտ աւելին տալ մեզի՝ Հ.Մ.Ը.Մ.ականներուս, աւելին տալ մեր ժողովուրդին:

Բաւարար չէ ունենալ միայն պատկանելիութեան գիտակցութիւն կամ սիրել Հ.Մ.Ը.Մ.ը, խանդավառուելի անով, քաջալերել անոր ձեռնարկները, ծափահարել եւ յուզուել անոր տողանցքներուն կամ խաղերուն, հպարտանալ Հ.Մ.Ը.Մ.ով:

Հ.Մ.Ը.Մ.ի պատկանելիութեան գիտակցութիւնը մեզի պէտք է մղէ ըլլալ պարտաճանաչ, կարգապահ եւ նախաձեռնող՝ աւելի լաւ կազմակերպելու համար Հ.Մ.Ը.Մ.ի կեանքը: Այս արդէն ուրիշ գործ է, որ կը պատկանի այլ պատասխանատուութիւն ստանձնած եղբայրներու:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԱՐՁԱՄԵՔԵՆԱՆ ԵՒ ՎԱՐՁԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի ակումբներուն գոյութիւնը, սկստուական եւ մարզական կեանքին պահպանումը, ինչպէս նաեւ միութենական կեանքին կազմակերպումը կ'ենթադրեն մեծ աշխատանք, որուն կը ըծուին կարեւոր թիւով անդամներ:

Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կեանքը դասաւորուած է իր կանոնադրով: Ընդհանուր կանոնադիր՝ համագաղութային կառույցին համար, ներքին կանոնա-



գիրներ՝ Շրջաններուն եւ Մեկուսի շրջաններուն: Հարկ է նշենք, որ Շրջան կը նշանակէ Շրջանային Վարչութեամբ օժտուած շրջաններ, իսկ Մեկուսի շրջան կը կոչուին այն մասնաճիւղերը, որոնք առանձնակի են եւ ուղղակի կապուած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան:

Կանոնադրային տրամադրութիւնները կը ճշդորոշեն իւրաքանչիւր մարմնին իրաւասութիւնները, պարտաւորութիւնները, մարմինէ մարմին յարաբերութիւնները, ժողովներուն եւ մարմիններուն պարտաւորութիւնները: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութիւնը ունի իր ընդհանուր կանոնադրութիւնը: Իրենց ներքին կանոնադրութեան կողքին, շրջանները ունին սկաուտական եւ մարզական իրենց ներքին կանոնադրութիւններ:

Միութեան մը ուժը կը կայանայ իր կանոնադրութիւններուն ամբողջական յարգումին մէջ:

Սակայն այս մասին չէ որ կ'ուզենք անդրադառնալ:

Հ.Մ.Ը.Մ. իր հիմնադրութեան օրէն միացուցած է սկաուտութիւնը եւ մարզական կեանքը՝ սկիզբը: Եւ այս գոյգ գործունէութիւնները ներդաշնակ ձեւով յառաջ կը տարուին վարչութիւններու կողմէ: Մասնաճիւղի վարչութիւնը՝ մասնաճիւղի մակարդակով, Շրջանային Վարչութիւնը՝ շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւնը՝ համազարգացի մակարդակով:

Հ.Մ.Ը.Մ. ձեւով մը պետական գործ կը տանի՝ առանց սակայն պետական նիւթական եւ այլ միջոցներ ունենալու: Հ.Մ.Ը.Մ. պաշտօնեայ վարչականներ չունի, որոնք ստանձնած ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի գործին վարչական կազմակերպումը: Անոնք կ'ընտրուին ժողովներու կողմէ, որոշ ժամանակաշրջանի մը համար: Կրնայ ըլլալ որ կարգ մը գործեր յանձնուած ըլլան անձերու, որոնք իրենց աշխատանքին համար վարձատրութիւն կը ստանան:



Յուշանուէրներ կը յանձնեն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան

Անհրաժեշտ է, որ անոնք, ինչ մակարդակի վրայ ալ գործեն, միշտ նկատի ունենան Հ.Մ.Ը.Մ.ի նպատակները, միշտ ի մտի ունենան, որ թէեւ կամաւոր կերպով կոչուած են պատասխանատուութեան, բայց եւ այնպէս ունին հիմնական աշխատանք մը, սահմանուած կանոնադրութեամբ, կարեւոր աշխատանք մը՝ կազմակերպելու միութիւնը, կազմակերպելու սկաուտական եւ մարզական կեանքը:

Անհրաժեշտ է, որ պատասխանատուութիւն ստանձնած Հ.Մ.Ը.Մ.ական մը, ըլլայ ան վարչական կամ Սկաուտ. Խորհուրդի անդամ կամ այլ, ունենայ գիտակցութիւն, որ իր աշխատանքը մաս կը կազմէ ընդհանուր ճիշդ մը, եւ բոլոր աշխատանքներուն գումարով է որ Հ.Մ.Ը.Մ. կը յաջողի իր նպատակներուն իրագործման մէջ, եւ ի դերեւ չի հաներ ժողովուրդին Հ.Մ.Ը.Մ.ին կապած յոյսերը:

Ամէն գործ իր անդրադարձը կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի վարկին վրայ:

Մեր անդամները, մեր համակիրները, մեր շրջապատը, մեր ժողովուրդը կը սիրէ Հ.Մ.Ը.Մ.-ը, հաւատք ունի անոր առաքելութեան հանդէպ: Պատասխանատու Հ.Մ.Ը.Մ.ականները չեն կրնար նկատի չունենալ այս պարագան:

Պաշտօնները պէտք չէ որ աթոռներու վերածուին, անձնական ըմբռնումները՝ պարտադրանքներու եւ տարիներու գործը՝ սովորամոլութեան, ռուլիին:

Հաւաքական աշխատանք է, միութեանական գործ է Հ.Մ.Ը.Մ.ի գործը:

Գործող ամէն հաւաքականութեան մէջ գոյութիւն ունին համակրանքներ եւ հակակրանքներ, սակայն այս երեւոյթը պէտք չէ ամուլ անհանդուրժողութեան վերածուի:

Ամէն տեղ պէտք է տիրէ գործակցութեան առողջ ոգին:



Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ մարզախաղերու կազմակերպիչ յանձնախումբը:



Գարլոս Սէֆերեան



Յարութ Յարութիւնեան

Պաշտօնը ծառայութիւն է եւ ոչ՝ աթոռ:

Կարծիքները, անձնական ըմբռնումները տեսակէտներ են եւ երբեք՝ պարտադրանքներ: Կարծիքներու գումարը միայն կը վերածուի որոշումի, գործադրելի բոլորին համար:

Ամէն թերացում կը վնասէ գործին եւ այսպէսով կը վնասէ Հ.Մ.Ը.Մ-ի անունին, պատկերին, վարկին: Լաւ պէտք է կազմակերպուած ըլլայ ամէն գործ, ներքին դաստիարակութիւն, սկստական հաւաքոյթ, մարզական փորձ թէ մրցում, հանրային ձեռնարկ, հրապարակային ելոյթ, տօնակատարութիւն թէ տողանցք:

Այս ձեւով միայն Հ.Մ.Ը.Մ. լիովին կը կատարէ իր դերը եւ կը տարածուի, կը շահի նոր վարկ եւ վստահութիւն, կը բարձրանայ Հ.Մ.Ը.Մ-ի դրօշը, աւելի վեր, աւելի բարձր, իր հովանին աւելի տարածելու համար պատանեկան եւ երիտասարդական զանգուածներու վրայ:

Իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ-ական, սկստուտ, մարզիկ թէ անդամ, լաւ պիտի գիտնայ եւ զգայ, որ ինք պարզ ըսկառուտ, մարզիկ, անդամ, վարչական եւ կամ պատասխանատու չէ, ինչպէս են այլ ժողովուրդներու սկստուտները, մարզիկները եւ միութենականները: Երանի՛ մենք ալ նոյն ձեւով ըլլայինք, միայն սկստուտ, միայն մարզիկ, առանց այլ մտահոգութիւններու, առանց այլ մտասեւեումի, պարզապէս՝ սկստուտ կամ մարզիկ, ուրիշ ոչինչ:

Այս նպատակով է որ նաեւ այսօր ունինք Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկին տասնաբանեան, որպէսզի զատորոշուինք այլ մարզիկներէ եւ դառնանք իսկական Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկներ:

Տասնաբանեան կ'ըսէ, որ Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկը՝

1. Հաւատարիմ է Հ.Մ.Ը.Մ-ի «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին: Ան պատրաստ է անսակարկ եւ հաւա-

տարմօրէն ծառայելու ազգին ու հայրենիքին:

2. Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկը մաքուր է նկարագիրով, մտքով եւ բարոյականով:

3. Դաշտերէն ներս թէ դուրս, կարգապահ ու քաղաքավար է, միջազգային «Ֆէր վիլէյ»ին տիպարն է:

4. Ան զուսպ է իր արտայայտութիւններուն կամ շարժումներուն մէջ եւ նախանձախնդիր է իր պատկանած միութեան բարոյականին:

5. Ան կը յարգէ իր պատասխանատուն կամ մարզիչը, կ'ենթարկուի անոր բոլոր ցուցմունքներուն՝ առանց այլեւայլի:

6. Մրցումներուն կը մասնակցի յաղթելու վճռակամութեամբ: Ան երբեք տկարութիւն չի ճանչնար:

7. Ան կը հաւատայ, որ մաս կը կազմէ հաւաքականութեան մը, մեծ ընտանիքի մը, որ իր կարգին կը հաւատայ հաւաքական աշխատանքի եւ համագործակցութեան սկզբունքին:

8. Յաղթանակներն ու պարտութիւններն կ'ընդունի մարզական նոյն ոգիով, վեհանձնութեամբ եւ համեստութեամբ:

9. Հ.Մ.Ը.Մ-ական մարզիկին Ֆիզիքականը որքան կը պատկանի իրեն՝ նոյնքան կը պատկանի իր միութեան: Ան կը գուրգուրայ իր Ֆիզիքական առողջութեան եւ մաքրութեան՝ հեռու քանդիչ մոլորութիւններէ:

10. Ան կը հաւատայ Հայաստանին եւ Հայ Դատին ու միշտ պատրաստ է զինուորագրուելու եւ ծառայելու Հայաստանին եւ Հայ ժողովուրդին:

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր,

Այս բոլորը ըսինք, որովհետեւ մենք Հ.Մ.Ը.Մ-ական ենք, մենք հայ ենք, այսինքն ինչ որ կ'ընենք հայօրէն կ'ընենք, ազգային ըմբռնումով կ'ընենք, նպատակով կ'ընենք:



Արմէն Կետիկեան



Վահրամ Դանիէլեան

Կ'ընենք, որպէսզի հայ մնանք մեր ապրած գաղութներուն մէջ:

Կ'ընենք, որպէսզի տիրանանք մեր ամբողջական իրաւունքներուն:

Այս գիտակցութիւնը երբեք բացակայ չի կրնար ըլլալ սկաուտին, մարզիկին, այլ մանաւանդ՝ վարչական պատասխանատուին մօտ:

Մեր հայ ըլլալու հանգամանքը մեզ արդէն կը դնէ որոշ պարտաւորութեան տակ:

Մեր Հ.Մ.Ը.Մ.ական ըլլալը մեզի կը դարձնէ աւելի յանձնառու՝ մենք մեզի հանդէպ, մեր միութեան հանդէպ, մեր ժողովուրդին հանդէպ, մեր երկրին՝ Հայաստանի հանդէպ:

Մեր բոլոր ճիգերը կը ձգտին մէկ նպատակի, հայը հայ պահել, հայը յանձնառու դարձնել, հայը աւելի գործունեայ եւ աշխատող դարձնել՝ մեր ժողովուրդին ձգտումներուն իրականացման համար:

Այս գիտակցութիւնը ներկայ է եւ տիրող պէտք է ըլլայ մեր բոլոր մտածումներուն, ծրագիրներուն, այլ մանաւանդ՝ գործին մէջ:

Հ.Մ.Ը.Մ.Ը ԱՅՍՕՐ

Մարզական եւ սկաուտական բազմաթիւ միութիւններ հիմնուեցան արտասահմանի մէջ: Այս միութիւնները յաճախ հիմնադիր ունեցան Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ին իբրեւ սկաուտ կամ մարզիկ դարձած Հ.Մ.Ը.Մ.ականներ: Նախանձախնդրութիւն կար պահելու Հ.Մ.Ը.Մ.ի անունը, պահելու համար պատմական կապ մը, յայտնելու, թէ նոր հիմնուած Հ.Մ.Ը.Մ.երը շառաւիղներն էին Պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.ին եւ ունէին միեւնոյն ազգային խէշալն ու նպատակները:

Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.եր կազմուեցան Ադեքսանդրիոյ, Գահիրէի, Յունաստանի, Ֆրանսայի, Լիբանանի, Սուր-



իոյ, Միացեալ Նահանգներու, մինչեւ հեռաւոր Արժանթինի եւ Աւստրալիոյ մէջ:

